№ 13 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 20

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 20 № 13

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի: Յունվարի 1-ից մինչև 1 յուլիսի 4 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Յարութիւն Կարապետեան և Եղիսաբէթ Կարապետեան Զօհրաբեանները, Շուշանիկ Կարապետեան և Տրդատ Մկրտչեան Յարութջանեանները, Սոֆիա Կարապետեան Փիրալեանը, Վասիլ Կարապետեան Փուզինեանը, նոյնպէս և Սոֆիա Յովհաննիսեան Զօհրաբեանը յայտնում են ազգականներին և ծանօթներին՝

ԿԱՐԱՊԵՏ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԶՕՀՐԱԲԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ յունվարի 17-ին, առաւօտեան ժամը 10-ին, կարճատև, բայց ծանր հիւանդութիւնից յետոյ: Հոգեհանգիստը այսօր յունվարի 20-ին, երեկոյեան ժամը 5-ին: Յուղարկաւորութիւնը շաբաթ, յունվարի 21-ին, առաւօտեան ժամը 10-ին, իր սեփական տանից (Բեհբութովսկի փող. № 49) դէպի Մողնի ս. Գէորգ եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: 1—1

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի յօդուածի առիթով. Վերջին տեղեկութիւններ. Տեղեկութիւններ գաւառից. Ճգնաժամը Շուշում. Դէպքերը Վրաստանում. Մամուլ. Բարբարոս չենք. Բագուի մանկավարժանների կեանքը. Կենտրոնացում և ֆեդերացիա. Նամակ Կարսից. Զանգեզուրում. Օզերովսկու կոչը. Ներքին լուրեր. Սահմանական տեղեկութիւններ. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Ազգերի ազատագրութիւնը:

## ՄԻ ՅՕԴՈՒԱԾԻ ԱՌԻԹՈՎ

### I

«Մշակի» ներկայ համարում մենք զետեղում ենք թարգմանաբար մի յօդուած ազգութիւնների ազատագրութեան մասին:

Յօդուածագրի ընդհանուր ոգին և եզրակացութիւնները համակրելի են, բայց պատճառաբանութիւնների վերաբերութեամբ կարող են տեղի ունենալ վիճաբանութիւն և լրացուցիչ նկատողութիւններ: Օրինակ յօդուածագիրը հակված է կարծելու, որ ազգային շարժումները չեն կարող ծագել ոչ դեմօկրատիական աշխարհահայեացքից, ոչ ժողովրդական կամ ռամկավարական աղբիւրներից և տրամադրութիւններից: Իսկ եթէ այդ այդպէս է, ուրեմն և ազգայնական շարժումները արդիւնք են միւս դասակարգերի և ինտելլիգենցիայի որոշ գործունէութեան:

Այդ միտքը յատուկ չէ միայն ներկայ յօդուածագրին Օվսեանիկօ-Կուլիկօվսկուն: Նա փոքր ի շատէ տարածված է գրողների մի որոշ շրջանում և մանաւանդ սօցիալ-դեմօկրատական գրականութեան մէջ:

Զբաղվել ընդհանրապէս այդ թէզիսի քննութեան գործով մենք մտադիր չենք:

Դա մեզ շատ հեռուն կը տանէր:

Դա մեզ կը ստիպէր վերցնել մի շարք ազգութիւններ և, ուսումնասիրելով նրանց քաղաքական և հասարակական ծրագրները ու կատարած շարժումները, դասաւորել նրանց մի քանի խմբերի և քննել թէ որն է նրանցից անմիջական կապ ունեցել ժողովրդական շահերի ու տրամադրութիւնների հետ և որը ոչ, ի հարկէ, քննելով անդրադարձման պատճառները:

Մենք այդպիսի ուսումնասիրութիւն այսօր չենք կարող մեզ վրա վերցնել և, թողնելով խնդրի ընդհանուր վճռահատութիւնը, կը բաւականանանք մի քանի խորհրդածութիւններով հայերի վերաբերութեամբ:

Դա աւելի մերձաւոր և գործնական հողի վրա կը դնի հարցը, որը եթէ ընդհանուր է, նաև վերաբերում է ի միջի այլոց և մեզ:

### II

Նախ առաջ բերենք այն համակրելի եզրակացութիւնը, որ անում է հեղինակը:

Ահա նա:

«Ճանաչելով ազգայնութիւնը իբրև մեծ կուլտուրական բարիք, առանց որի անհնարին են մտքի ստեղծագործութիւնը և հասարակական ու ժողովրդական նախաձեռնութեան զարգացումը, ազգային կուսակցութիւնները ձգտում են հեռացնելու այն արտաքին խոչընդոտները, որոնք ազգութիւններին արգելք են հանդիսանում կանոնաւոր զարգանալու: Լեզուների, բարբառների և տեղական գրականութիւնների վրա ծանրացած արգելքները պէտք է վերացվեն: Ազգային լեզուները և բարբառները պէտք է մուտք գործեն դպրոցի, դատարանի և բոլոր այն հիմնարկութիւնների մէջ, որոնք անմիջական շփումներ ունեն ժողովրդական մասսաների հետ: Ազգային զարգացման ձգտելը իւրաքանչիւր ազգի բնական իրաւունքն է, որը պէտք է անկապտելի ճանաչվի»:

Իսկ երբ այդ իրաւունքները ճանաչված կը լինեն և ազգերը կը սկսեն ազատ զարգանալ, այն ժամանակ, անկասկած, բոլոր այն ուժերը, որոնք առաջ զբաղված էին մաքառելով այդ իրաւունքների ապահովութեան համար, իրանց կը նուիրեն ընդհանուր կուլտուրական զարգացման գործին:

Եւ բնական ու ցանկալի պէտք է համարել այն դրութիւնը, երբ մի ազգի կուլտուրական ուժերը, իրանց բոլորովին ազատ զգալով ճնշումներից, զբաղվում են ստեղծագործական աշխատանքով, մտածելով կատարեալ և լաւագոյնի մասին, առանց մշտական մտատանջութեան այնպիսի խոչընդոտների մասին, որոնք ահնում են ծանր զգացմունքներ, թէ արդեօք ազգութեան հիմնական պահանջների անխախտելիութիւնը վտանգված չէ որ և է կերպով:

Անկասկած, ուրիշ կերպ չէ էլ կարելի:

### III

Այժմ գանք մեր վերև դրած հարցին:

Արդեօք հայերի մէջ ազգային կեանքը, կամ ազգային շարժումը չէ համապատասխանում ժողովրդական տրամադրութիւններին: Արդեօք նա միայն արհեստական մի երևոյթ է, ծնունդ ինտելլիգենցիայի կամ ոչ ժողովրդական խաւերի:

Բաւական է միայն շարել այս հարցերը ժպիտ յարուցանելու մեր ընթերցողների շրթունքների վրա: Բայց այդ, ի հարկէ, դեռ ոչինչ չէ նշանակում: Շատ հարցեր կան, որոնք սկզբում ծիծաղելի են թւում. բայց յետոյ, խոր ուսումնասիրութիւնից և քննութիւնից յետոյ, դուրս են գալիս պատկառելի հարցեր:

Մենք այդպէս էլ պատրաստ ենք նայել այդ հարցերի վրա: Բայց ամենաթոյլ քննութիւնը անգամ ցոյց է տալիս, որ ազգայնական շարժումը հայերի մէջ ժողովրդական է և խոր ժողովրդական:

Մեր բուրժուա դասակարգը երկար ժամանակ շատ անտարբեր և սառն էր պահում իրան ազգայնական շարժումների մէջ և այժմ էլ առանձին խոշոր ու վճռական դեր չէ կատարում: Մեր բուրժուա դասակարգը, չափազանց զբաղված լինելով իր առևտրական և արդիւնաբերական գործերով, յաճախ բոլորովին հեռու է պահել իրան ազգային հասարակական կեանքից և բաւականաչափ ուշադիր չէ եղել ոչ իր մայրենի լեզուի զարգացման, ոչ իր զաւակների համապատասխան կրթութեան, ոչ հայկական հիմնարկութիւնների պահպանման հոգսերին: Եւ այն ինտելլիգենցիան, որ չափազանց մօտ է եղել բուրժուա դասակարգին, ընդհանրապէս աւելի զբաղված է եղել կապիտալին պաշտելով, քան ազգային ցաւեր ու հոգսեր ուսումնասիրելով:

### IV

Մեր ժողովուրդը ինքն է պահանջ յայտնել, ինքն է ստիպել, որ ղեկավարող շրջանները վերջապէս զբաղվեն նրանով, պաշտպանեն նրա շահերը, միջոցներ որոնեն ապահովելու նրա լեզուն, կրթութիւնը և հասարակական զարգացումը:

Բուրժուան իր համար յաճախ աւելի յարմար է գտել արհամարհելու մայրենի լեզուն և նրան դուրս վռնդելուց, ինտելլիգենցիայի մի մասը իրան գոհ է զգացել, երբ հնարաւորութիւն է ունեցել օտար գրականութեան արդիւնքները ընթերցասիրելու և ուրիշ ազգութիւնների հասարակական հիմնարկութիւնների մէջ գործելու:

Սակայն ժողովուրդը չէր կարող իրան երջանիկ զգալ այն բանով, որ նրա բուրժուան և ինտելլիգենցիայի մի մասը գտել էին իրանց համար միջոցներ իրանց նիւթական և մտաւոր կեանքի մի քանի պահանջները եսական կերպով լրացնելու:

Դա ամենևին չէր կարող մխիթարութիւն լինել ժողովրդի համար: Եւ ահա նա սկսեց բողոքել:

Նա պահանջեց, որ ճանաչեն իր լեզուն, իր դպրոցը, իր հասարակական իրաւունքները, ազգակիցների դատերը, իր գոյութեան կատարեալ ապահովութիւնը:

Ժողովուրդը պահանջում էր երկար ժամանակ, երբեմն խուլ կերպով, երբեմն բարձրաձայն:

Եւ վերջապէս նրա ձայնը և պահանջը լսելի եղան: Կազմվեց ժողովրդասէր ինտելլիգենցիա, որ ուշադրութեամբ վերաբերվեց ժողովրդի պահանջներին և աշխատեց կարելին չափ բաւարարութիւն տալու նրանց:

Եւ մեր ինտելլիգենցիան, եթէ ույժ և նշանակութիւն է ցանկանում ունենալ, նա կարող է անել այդ միայն և միայն հիմնվելով ժողովրդի վրա, արձագանք և արտայայտիչ լինելով ժողովրդական կարիքների և պահանջների:

Մեր ազգայնական կեանքը և ազգայնական շարժումները այնքան հարկաւոր չեն բուրժուական դասակարգի, որքան ժողովրդական մասսաների համար: Առևտրականը իր գլուխը կը պահի ընդհանուր առևտրական դասակարգի մէջ, նա իր լեզուն էլ և ամբողջ բարոյական դէմքն էլ կը յարմարացնէ միջավայրին բայց ժողովուրդը իր ամբողջութեամբ այդ չի անիլ և չէ կարող անել:

Նա պահանջում է, որ կեանքը իրեն տայ այնպիսի արտայայտութիւն, որ բաւարարութիւն տայ նրա պահանջներին:

### V

Մենք վիճելի ենք համարում և յօդուածագրի այն թէզիսը թէ ազգայնութիւնը հիմնված է մտաւոր հիմունքների վրա և թէ զանազան ազգութիւնների մարդիկ ունեն մի և նոյն զգացմունքները, իսկ տարբերվում են մտաւոր իրանց կազմուածով:

Ազգային ինքնուրոյն մտքերի թէ կազմութեան և թէ փոխադարձ վերաբերմունքների մէջ միաժամանակ խոշոր դեր են կատարում թէ մտաւոր տարրերը և թէ զգացմունքները: Եւ ով գիտէ, գուցէ զգացմունքները յաճախ աւելի գերակշռող դեր են կատարում, քան մտաւոր տարրերը: Իբրև օրինակ կարող ենք մատնացոյց անել, որ ընդհանրապէս մեր իրականութեան մէջ մենք յաճախ աշխատում ենք մոռանալ այն, որ պէտք է գտնել զգացմունքների որոշ արտայայտութիւնները և հոգ պատրաստել համերաշխութեան համար: Մտաւոր տարրը ասում է թէ հարկաւոր է համերաշխութիւն, եղբայրակցութիւն, իսկ զգացմունքը չէ կարողանում այդ խելացի խրատը մարսել և սիրով ու հրճուանքով մօտենալ հարևանին, որին երեկ խէթ աչքով է նայել:

Ազգութիւնը համագումար է մի ժողովրդի մտաւոր առանձնայատկութիւնների, զգացմունքների և կուլտուրական ձգտումների: Դժուար է ջլատել այդ ազդեցութիւնները մէկը միւսից:

Մենք բաւականանում ենք այս նկատողութիւններով:

Անկասկած՝ մենք ևս հեղինակի հետ միասին վտանգաւոր և անհամակրելի ենք համարում ազգայնութեան այն խեղաթիւրումը, որ կրում է ազգամոլութիւն, նացիոնալիստութիւն և շօվինիզմ անունները:

Ա. Քալանթար

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մենք ստացանք Շուշուց հետևեալ հեռագիրը, տրված յունվարի 19-ին կէսօրից յետոյ ժամի 5-ին:

Այսօր, գեներալ Գոլոշչապովի կարգադրութեան համաձայն, գնացին դէպի Եւլախ հայերի և թուրքերի ներկայացուցիչները Եւլախ-Շուշի ճանապարհն բանալու համար: Հայերը ամեն միջոց գործ դրին ուղարկելու Եւլախից ալրանք մինչև այժմ սովեալ վիճակի մէջ մնացած հայերի համար:

Շահնազարեան

—

Գանձակից ստացանք հետևեալ հեռագիրը 19 յունվ. 1 ժամ 55 ր.

Քաղաքի շուրջը գտնվող գիւղերից եկող հայերը Ելենենդորֆ գիւղի մօտ զինաթափվել են կօզակներից: Վերցված և ոչնչացրած է 6 հրացան: Նոյն ամսում ամսի 18-ին զինված թուրքեր յարձակվեցին չորս սայլով ճանապարհորդող հայերի վրա, սպանեցին երկուսին, այրեցին նրանց գիակները, վիրաւորեցին մէկին և գերի տարան չորս կին և հինգ երեխայ: Այրված գիակները բերված են քաղաք: «Нов. Обозр.» լրագրի ամսի 15-ի հաղորդագրութեան մէջ Իսաևիչի սպառնալիքների մասին սպրդել է սխալ: Արդարութիւնը վերականգնելու համար քննութիւն կատարել է նա իր նախաձեռնութեամբ և ոչ թէ հայ ներկայացուցիչների պահանջով: Կաշուեգործարանը, որտեղից զինուորների ասելով, հրացան է արձակված, գտնվում է հայերի և թուրքերի սահմանագծում: Ինցիդենտի նշանակութիւնը չափազանցրած է թղթակցի կողմից: Գնդապետ Իսաևիչի վարմունքը կոռեկտ և անաչառ է եղել:

Հայերի ներկայացուցիչներ՝ Խօջաեան, Սերեբրյակեան, Թեմուրեան, Մելիք-Բեգլարեան, Մելիք-Մնացականեան և Ղազարեան:

—

Գորիսից հեռագրում են յունվարի 16-ին.

«Պղնձի գործարանի (Մելիք-Ազարեանցի) շուրջը սա այժմ հանգիստ է. Չըրջակայ գիւղերից շատերը գաղթում են ներքև: Թուրքերը յարձակվեցին Նաղաֆարի, Մօղնի վրա, գրաւեցին ձմեռանոցները: Ինքնապաշտպանութիւնը շարունակվում է: Երէկ ընդհարումն եղաւ, հրացանաձգութիւնը լսվում էր գործարանում: Մասնակցում են թուրք գիւղեր—Գեատալու, Ջիբիլլու, Բայդաշ; հայ գիւղեր—Արծվանիկ, Մուղէս, Եղավարդ, Ղարաբաղա, Աղարակ: Սպանված է մինը Գեատալուից: Այսօր հանգիստ է»:

—

Ղօշխութանից (Ղազախի գաւառ) յունվարի 17-ից մեզ գրում են.

«Այսօր մեր հարևան՝ Քեամալու, Ինջա և Ղայմախլու թուրք գիւղերից մի խումբ յարձակվեց Դովեղ հայ գիւղի հովիւների վրա և հօտը ուզում էր քշել: Ցերեկվայ պահապանները նկատեցին այդ բանը և իսկոյն իմաց տուին գիւղին: Սկսվեց հրացանաձգութիւն: Վրա հասաւ խմբապետ Շիայլին իր խմբով, յետ խլեց հօտը և երկու զինված թուրքերին էլ բռնեց: Թուրքերին ուզում էին տեղի երիտասարդները սպանել, պատճառ բերելով այն, որ այս երրորդ անգամն է, որ փորձում էին թուրքերը քշել հայերի անասունները, այն ինչ դրանց մօլլաներն ու աքսախկալները ամեն օր գալիս են և հաշտութեան մասին խօսում: Խմբապետ Շիայլին չը թոյլատրեց երիտասարդներին սպանել բռնվածներին, հրացանաձգութեան ժամանակ էլ մարդկային զոհեր չեն եղել»:

—

Քարվանսարա, յունվարի 18-ին, 5 ժ. 40 ր.

«Յունվարի 17-ին Աքսիփարա գիւղի թուրքերը ուրիշ տեղից եկած թուրքերի հետ միասին յարձակումն կատարեցին Կոնման հայ գիւղի վրա և քշեցին ոչխարների հօտը: Հայերը յետ մղեցին յարձակումը և խլեցին հօտը: Սպասվում է կրկնակի յարձակում»:

—

Արէշի գաւառից մեզ յայտնում են, որ մի քանի օր առաջ թուրքերը մեծ թւով յարձակվում գրաւեցին Սաֆրազեանի կալուածքի 2 տան վրա, այրելով ամբողջովին տուները: Իսկ Սաֆրազեանը բացակայ էր. վնասը հասնում է մինչև 35,000 ր.:

—

Երէկ, յունվարի 19-ին Թիֆլիսում ցերեկվայ 12 ժամին տեղի ունեցաւ [illegible] հրացանաձգութեան մի դէպք, որ մեծ իրարանցում գցեց Ալիերի Մեյդան կոչված հրապարակի շրջակայքում: Հրացանի պայթիւն լսվելուց մարդիկ իրարով եղան: Թուրքերը սկսեցին փախչել դէպի իրանց թաղը, հայերից մէկը, կարծելով թէ թուրքերը սկսել են յարձակվել, բռնեց մի թուրքի: Բայց յետոյ պարզվեց, որ հրացան գցողը եղել է մի գօրօդօվօյ: Նա արձակել է օդի մէջ: Երբ մօտեցան և հարցրին պատճառը, նա բացատրեց, որ դա տեղի է ունեցել պատահաբար, բոլորովին անսպասելի կերպով: Ժողովուրդը հանդարտվեց:

—

Բագուից եկողները մեզ պատմում են, որ քաղաքում ցերեկով եռում է կեանքը, իսկ գիշերով բոլորովին մեռնում: Հէնց որ մթնում է, քաղաքացիները շտապում են վերադառնալ տները և գիշերով դուրս չը գալ:

Բացի աւազակներից և չարամիտներից բնակիչները վախենում են գիշերները և կօզակներից, որոնք յաճախ նեղացնում են և սպառնալիքներով խուզարկում: Մի քանի օր սրանից առաջ մի գօրօդօվօյ կլուբի մօտ ընդհարում ունեցաւ հարբած կօզակների հետ և սպանեց կօզակներից մէկին:

Բոլոր այդ գիշերները երբեմն լսվում են հրացանի պայթիւններ թուրքական մասից, որտեղ այժմ հայեր մնացել են շատ քիչ թւով: Ցերեկով էլ հայերը դեռ մեծ զգուշութեամբ են գնում թուրքական թաղերը:

Հայերը սկսել են իրանց սովորական պարապմունքները, բայց հասարակական կեանքը դեռ չէ մտել իր սովորական շաւղի մէջ: Հայերը այս տարի չունեցան ներկայացումներ, իսկ թուրքերը կազմեցին մի քանի ներկայացումներ:

Իսկ ուսանողական երեկոյթը, որ տեղի ունեցաւ յունվարի 12-ին և մեծ աջողութիւն ունեցաւ, տալով մօտ 2000 ր. արդիւնք, կազմված էր բոլոր հասարակական խաւերի գործակցութեամբ:

Աշխատանքները սկսվել են նաւթահանքերում և գործարաններում: Փոքր ինչ թոյլ է գնում գործը Բիբի-Հէյբաթի շրջանում:

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Կարաեազլի, յունվարի 17-ին

Թիֆլիսի գաւառապետի պատուէրի համաձայն այսօր այստեղ էին հաւաքվել տեղիս բոլոր թալանվածները, քիչ բացառութեամբ, բացատրութիւն տալու գաւառապետի օգնական Գերասիմովին և հաշտարար միջնորդին, որոնք յատուկ ուղարկված էին նահանգապետից, հայերի թալանած կայքը յետ խլելու Թարսլու, Քօսալու ու Նազարլու թուրք գիւղացիներից: Ուղարկված էին մի հարիւրեակ պլաստուններ ևս:

Պ. Գերասիմովը առաջ դիմեց թալանվող հայերին, թէ համաձայն էք, ու խուզարկենք թուրքերի տները ձեր գոյքը գտնելու համար. հայերը բայց ի բաց մերժեցին խուզարկութիւնը, յայտնելով, որ թալանի օրից արդէն անցել է մօտ երկու ամիս, որի ժամանակ թալանողները անարգել կերպով փոխանակած էին թալանած գոյքը հեռու տեղերի հետ, այնպէս որ կարելի է նախօրօք գուշակել խուզարկութեան անօգուտ լինելը. այդ մասին պ. Գերասիմովը համաձայնեց:

Յետոյ դառնալով թուրքերին, որոնք մինչև թալանվողների գալը արդէն հաւաքվել էին, յայտնեց, որ իրան և հաշտարար միջնորդին նահանգապետը ուղարկել է, «որ ձեզ յայտնենք, որ թալանված իրերը որքան հնարաւոր է վերադարձնէք տէրերին, իսկ մնացածի մասին նոյնպէս հաշտութեամբ իրար հետ վերջացնէք, որովհետև ես չեմ ուզում ույժի դիմել. գիտէք, որ դրա համար մի հարիւրեակ կօզակ ունեմ իմ տրամադրութեան տակ, բայց կողմնակից չը լինելով բռնութիւնների, նոյն իսկ կօզակներին չեմ ուղարկում ձեր գիւղերը այլ պահում եմ այստեղ ինձ մօտ»:

Թուրքերը այդ առաջարկին պատասխանեցին, որ Կարաեազլի թալանման օրը իրանք Թիֆլիս էին գնացել իրանց գիւղացիներին ազատելու,—որովհետև մեզ լուր հասաւ, որ մեր գիւղացի արաբաչիներին ու չռվադարներին թալանել են հայերը և կոտորել. մեր Թիֆլիսում լինելը կարող են վկայել նաև մեր մէջ մեծ համակրութիւն վայելող Եղիազարովը, Զուլգադարովը, Մաֆթիսը և ուրիշ թուրք օֆիցէրներ: Թիֆլիսից յետ դառնալիս գտանք մեր գիւղերը նոյնպէս աւերված և մեր գոյքը յափշտակված այնպէս, ինչպէս և հայերինը, այնպէս որ մենք աւելի ենք վնասված քան թէ հայերը. ուստի ոչ մի բան չենք խոստանում վերադարձնել, որովհետև մեր ամբողջ հասարակութիւնը անմասն է եղել այդ թալաններումը:

Պ. Գերասիմովը յայտնեց, որ ինքը ևս հաւատալ թուրքերին ճշմարտախօս է ճանաչում և իր վրա շատ վատ տպաւորութիւն է թողնում թուրքերի այդ առարկութիւնը, ու նորից կրկնում է, որ նահանգապետը իրան և հաշտարար միջնորդին ուղարկել է որպէս ռուսների, որոնց համար ազգերի խտրութիւն չը կայ, այլ գոյութիւն ունի միայն և միայն արդարադատութիւն: Ուստի նորից կրկնում եմ, ասաց պ. Գերասիմով, ուզէք պատասխանեցէք, որ ես յայտնեմ նահանգապետին:

Թուրքերը առարկեցին, որ այս վեցերորդ անգամն է, որ իրանց հարց ու փորձի են ենթարկում և շատ զարմանում են, որ իրանց Թագաւորի հաւատարիմ հպատակներին՝ չեն հաւատում, իսկ հայերին, որոնք արդէն 24 տարի է պատրաստութիւն են տեսնում, միշտ բունտ են անում, ռումբեր են ձգում, մինչև անգամ երեք ամսվայ ընթացքում 7 անգամ զինուորական դրութիւն են մտցնում երկրի մէջ,—ու մեր Թագաւորին էլ ուզում են հեռացնել ու իրանց Սարգսին նրա տեղը դնել. և նրանց հաւատում էք. նորից յայտնում ենք, որ մենք հայերի հետ թշնամի ենք և երբէք թոյլ չենք տայ նրանց գալ մեր մէջ ու ոչ մի բան էլ չունենք նրանց վերադարձնելու. այս է մեր վերջին խօսքը:

Պ. Գերասիմովը թալանող թուրքերին էլի մի քանի քնքոյշ հարցեր տալուց յետոյ արձակեց նրանց և հայերին:

Զարմանալի է: Մի հարիւրեակ կօզակներ դրված էին ադմինիստրացիայի տրամադրութեան տակ, որ օգնեն թալանը յետ խլելու. ապա ինչո՞ւ են նրանց թուրքերից թագցնում նոր հարսի պէս, կամ ինչ կարիք կայ թալանողի, աւերողի, ստախօս ու զրպարտիչների հետ այդ տեսակ քնքոյշ զրուցատրութիւններ: Օ՜օ՜, թուրքական օրօր, շատ լաւ ես քընացնում, բայց մինչև ե՞րբ:

Ստեփանեան

## ՃԳՆԱԺԱՄԸ ՇՈՒՇՈՒՄ

Յունվարի 13-ին

Շուշու զօրքի գլխաւորը երէկ կարդաց Թօփխանում, ի լուր հայերի, գեներալ-մայոր Գոլոշչապովի Աղդամից խփած հետևեալ հեռագիրը. «Այս րօպէին թնդանօթի կրակով ռմբակոծեցի երկու հայ գիւղեր, որոնք դեկտեմբերի 26-ին Ասկարանում յանդգնաբար զօրքի առաջը կտրելով խլել էին 52 ֆուրգոն ալրանք (թուրքի պայարը): Նոյն վիճակը կը սպասէ և այն գիւղերին, որոնք կը համարձակվեն այլ ևս Ասկարանի անցքը կտրել: Յայտնեցէք հայ և թուրք ժողովրդին, որ ես չեմ գալիս նրանց իրար հետ հաշտեցնելու, այլ որ իրանք անմիջապէս կարճեն իրանց լարված դրութիւնը, վայր դնեն զէնքը և յանձնեն իրար հանդէպ չխնած դիրքերը, այլապէս այդ դիրքերը թնդանօթով կը վերցվեն, հետևանքը վատ կը լինի և այն ժամանակ թող իրանց մեղադրեն: Ինձ համար հայ և թուրք—երկուսն էլ հաւասար մի են»...

Այդ ռմբակոծված գիւղերն են Խրամորթը և Ղլիջբաղը: Ժողովուրդն իսկոյն դիմեց դումայի դահլիճը, յայտնեց զօրքի գլխաւորին և ոստիկանապետին, որ ինքը միշտ պատրաստ է եղել հաշտութեան, անթիւ անգամ յայտնել է իր ցանկութիւնը տխուր արդիւնքներին վերջ տալու, սակայն միշտ նոր նոր բորբոքումներ, նորանոր վէճեր ու յոյզեր առաջ գալով յաղթող է եղել բօլէների սպառնութեան տակ: Նա երկուսին էլ—գնդապետին և ոստիկանապետին խնդրեց իր սրտաբուղխ ցանկութիւնը յայտնել թուրքերին և գեներալ Գոլոշչապովին, իսկ դիրքերի բացման համար լիակատար իրաւունք տուեց զօրքի գլխաւորին:

Թուրքերի պատասխանը. «Մենք չենք հաշտվի. մեզ շատ են կոտորել ու վնասել. գեներալը կը գայ, ինքը գիտէ»:

Իրաւունք ունեն...

Բայց դեռ խօսենք այդ և մի րօպէ սառնասիրտ լինենք հայ անմեղ գիւղերը ռմբակոծումը լսելու. անմեղ, որովհետև նրանց մեղքերի մէջ [illegible], եթէ իսկապէս մեղանչել են, իրան՝ թուրք տարրի քառամեայ բօյկօտն է և զինված խմբերով դէպի քաղաք ներս խուժելու յաւակնութիւնը:

Սակայն թող մխիթարական լինի մեզ համար մի հանգամանք, որ կառավարութիւնն սկսել է խստագոյն միջոցներով զսպել հայի և թուրքի իրար դէմ լարված գազանութիւնները, մի կողմ թողնելով առ այժմ յանցաւոր կողմի հրապարակ հանելը: Եւ այսպէս հեռագրական այս կարգադրութեան հետ զուգընթացաբար Աղդամից մեզ հասնում են լուրեր, որ գեն. Գոլոշչապովը թնդանօթներով շրջապատել է այն գիւղերը, որոնց շրջանում նորագոյն անցեալում մորթվեցին կառավարութեան պաշտօնեաներ՝ պրիստաւ Միրզայեան և ռոտմիստր Իկոնիկօվ, և պահանջում է տալ յանցաւորներին, որ Աղդամում զինաթափ է անում թուրքերին և արդէն մի բէկի տանից 200 հրացան է հանել և իրան բէկին բանտարկել և այլն և այլն: Լուրերն այնպէս արագ են յաջորդում իրար, որ չը գիտենք որին հաւատալ: Սակայն հաւատում ենք մի բանի, որն անթիւ անգամ կրկնել ենք, հաւատացել ենք, որ խաղաղութիւն կը լինի այն ժամանակ, երբ կառավարութիւնը ներգործական միջոցներ ձեռք կառնէ սաստելու, պատժելու և անհետ անելու զինված խուժանին: Այդ էր հարկաւոր, դրա նշաններն էլ տեսնում ենք:

Ուրեմն... հաւատանք, որ սար ու քոլ ընկած ժողովուրդը, պաշարված, բանտարկված վաճառականը վերջապէս կարող է վստահութեամբ կառք նստել ու խճուղով Եւլախ գնալ: Այդ մէկ: Իր չոլերն ընկած, տեղն անյայտ, թուրքերի հալալ սեփականութիւն դարձած ապրանքը յոյս ունի ստանալ հայ վաճառականը, կամ գոնէ այսուհետև վտանգից անփորձ, անսասան նոր ապրանք բերել տալ: Այս երկու: Որ անկեղծ կը լինի գեներալ Գոլոշչապովի յայտարարութիւնը—«հայ և թուրք ինձ համար մի են» ասելով և կը ստանանք մենք Եւլախից նաւթ, շաքար, ալիւր, պտուղ, մ/ն և այլ կենսական մթերքներ, թէ՝ բուն Օզերովսկու դեռ երեք պարտիա ապրանք նախ և առաջ թուրքերի համար պիտի գայ, իսկ հայերին յետոյ: Այդ երեք: Վրա չորրորդ՝ Շուշու հայ ժողովուրդը կը դիմանայ մինչև երեք պարտիայի վերջնական ներմուծումը, որը առնուազը մի ամիս կարող է տևել և այդ մի ամսում ինչ կը լինի մեր դրութիւնը: Ահա հարցեր, որոնք այս րօպէին պահանջում են մեզ և չը գիտենք թէ որքան մխիթարական կը լինի դրանց լուծումը մեզ համար:

Այս ճգնաժամում էլ դարձեալ զերծ չենք մեր շուրջը թափվող արիւնից:—Քաղաքի վերին գտնվող առաջ Խաթլալու և Շուշու դարանակալ թուրքերը երէկ էլի կոտորեցին ճանապարհորդ անզէն հայերին: Սպանեցին երկու հոգու և վիրաւորեցին վեցին:

Տ.

## ԴԷՊՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Կովկասեան փոխարքան ստացել է Կվիրիլից յունվարի 14-ից հետևեալ հեռագիրը.

«Գնդապետ Կրիլօվը, իր զօրախմբով գալով Օզուրգէթի, հաղորդում է, որ բնակիչների մի մասը, վախենալով ճնշումներից, քաշվել է լեռները, միւս մասն էլ կողոպուտներ անելու նպատակով մի շարք հրդեհումներ արեց, որի ժամանակ պայթվում էին շատ փամփուշտներ ու ռումբեր: Զօրախումբը սկսեց կատարել իր վրա դրած պարտականութիւնները: Այսօր Շօրապանի գաւառի չորս համայնքներից ստացայ հետևեալ հեռագիրը. «Բոլոր դասակարգի և կարգութեան տէր անձինք, թւով հինգ հազարից աւելի, այսօր հաւաքվելով Սաչխերում իրանց քահանաների առաջնորդութեամբ, Թագաւոր Կայսրի պատկերով և դրօշակներով, Աստուածամօր հրաշագործ պատկերի առաջ ծնկաչոք հանդիսաւոր կերպով հաւատարիմ հպատակութեան ուխտ տուեցին Նորին Կայսերական Մեծութեան և երդվեցին յանձնել կառավարութեանը իրանց անդամներից պետութեան համար վտանգաւորներին: Միջնորդում են կառավարչական հսկողութիւնը սաստկացնելու համար և աղերսում են Ձերդ Պայծառափայլութեանը անձամբ գալու այստեղ»: Յետոյ ստարշինաների ստորագրութիւններն են: Գումարտակները կալանաւորութիւններ կատարեցին. դատարանը եկաւ, արդէն նրա ձեռքն են յանձնված տէնգինցիների վրա յարձակվողները: Ամսիս 15-ին պահանջներիս կատարման ժամանակամիջոցը լրանում է»:

Գեներալ-մայոր Ալիխանով:

Ստացանք հետևեալ հեռագիրները դեկտեմբերի 31-ին. «Ցագվերիում 80 զինված տեղացիներ յարձակվեցին ոստիկանական վարչութեան, հաշտարար բաժանմունքի և պօստի բաժանմունքի վրա, ուր այրեցին արքունական գոյքը, գրքերը, գործերը և բաժանմունքի դոկումենտները և գողացին 1002 րուբլի փոխադրական գումարներից, նոյնպէս և՝ գնահատված ծրարներ»:

Դեկտեմբերի 6-ին զինված ամբոխը ներս խուժեց գիւղաքաղաք Զուգդիդը, պահապան զինուորների պահակատեղը և զինաթափ արեց զինուորներին: Նոյն օրը ամբոխը ուժով ներս խուժեց Զուգդիդի գաւառական վարչութիւնը և Զուգդիդի 1-ին և 2-րդ մասի քննիչների ատեանը և վերցրեց հրազէններ. յետոյ ամբոխը մտաւ Զուգդիդի բանտը և, հեռացնելով վերահսկողներին, ազատեց 8 բանտարկեալների:

## ՄԱՄՈՒԼ

Կառավարութիւնը իր բիւջէտի դեֆիցիտը ծածկելու և պետական եկամուտների նոր աղբիւրներ գտնելու համար ծրագրել է մի շարք նոր հարկեր և ակցիզներ: Հեռագիրը հաղորդեց, որ դիտաւորութիւն կայ, ի միւս այլոց, ակցիզ սահմանել թղթի վրա: Այդ նախագիծը, բնականաբար, սաստիկ դժգոհութիւն է առաջ բերում մամուլի մէջ: «Рус. Вѣд.» լրագիրը այդ առիթով ահա ինչ է ասում.

«Ի հարկէ, ամեն մի կառավարութիւն պարտաւոր է միջոցներ ունենալ իր բիւջէտը առանց դեֆիցիտի գոցելու համար, բայց ամեն մի կառավարութիւն, եթէ միայն նա կամենում է ղեկավարվել իր գործողութիւնների մէջ ժողովրդի շահերով, պէտք է կարողանայ ընտրել եկամուտների «գլխները» այնպէս, որ ժողովրդի շահերը ամենից քիչ վնաս կրեն: Բայց թղթի վրա ակցիզ դնելը՝ նշանակում է ակցիզ դնել լուսաւորութեան վրա: Ակցիզը կը թանգացնէ թուղթը, ուրեմն կը թանգացնէ գիրքը, լրագիրը, ամսագիրը:

Եթէ հարուստ Անգլիան մինչև 1861 թ. կարողացաւ պահել իր բիւջէտի մէջ հարկը թղթի վրա, այդտեղ էլ սակայն այդ հանգամանքը ամենաազդու բողոքներ առաջ բերեց և Գլադստոնի փառաւոր յաղթանակներից մէկը նրա յաղթութիւնն էր թղթի հարկը ոչնչացնելու հարցին մէջ: Ռուսաստանում, ուր լրագիրը և բրօշիւրը նոր են սկսում մուտք գործել ժողովրդական լայն խաւերի մէջ, թղթի վրա հարկ սահմանելը ուղղակի կարող է վտանգել կուլտուրայի գործը: Դա կը լինի ոչ այնքան ֆինանսական, որքան քաղաքական անխոհեմութիւն, որ ունի սաստիկ հակալուսաւորական բնաւորութիւն»:

Տեսնենք, կառավարութիւնը կը զգուշանայ մամուլի բողոքի ձայնից:

*

Եթէ անհաճոյ տպաւորութիւն է թողնում թղթի վրա ակցիզ սահմանելու լուրը, ոչ պակաս տարօրինակ տպաւորութիւն է գործում և հեռագրական գործակալութեան նորերս հաղորդած նոր կարգադրութիւնը մամուլի գործերին վերաբերեալ մի քանի արարքների մասին: Այդ կարգադրութեան համաձայն, եթէ մամուլի մէջ երևան յօդուածներ «վիրաւորական Նորին Մեծութեան համար, հայհոյող ինքնակալութիւնը, կոչող դէպի խռովարարութիւն և զինուորված ապստամբութիւն»—այդ տեսակ արարքների համար պէտք է փակվեն տպարանները: Դրանից [illegible] հետևում է այն, որ դնելով տպարանատէրերի վրա այդպիսի պատասխանատուութիւն, այդ մի և նոյնն է, թէ նրանց վրա դրվում է պարբերական հրատարակութիւնների պարտաւորութիւնը: Բացի դրանից, ինչպէս շատ ճիշտ նկատում են մի քանի լրագիրներ, այդ նոր կարգադրութիւնը սաստիկ հակասում է հոկտեմբերի 17-ի մանիֆեստին և կարող է գործադրվել միայն այն դէպքում, երբ մանիֆեստը ջնջվի: «Ինչպէս կարող է տպարանը պատասխանատու լինել—ասում է «Молва» լրագիրը—«ինքնակալութեան» դէմ գործած արարքների համար, երբ ինքնակալութիւնը ջնջված է հոկտեմբերի 17-ի մանիֆեստով և մեր մինիստր-նախագահը—ինչպէս կարելի է տեսնել նորերս տպված մի քանի գրողների և հասարակական գործիչների նամակից, որ արտատպեցին ուրիշ շատ լրագիրներ և ոչ մէկի կողմից չը հերքվեց—ասել է հոկտեմբերի 18-ին այդ գրողներին. «Այսօրվանից ինքնակալութիւնը Ռուսաստանում այլ ևս չը կայ և չէ էլ կարող լինել»:

*

Սահմանադրական-դեմոկրատական կուսակցութեան պատգամաւորների համագումարը (այդ կուսակցութիւնը այժմ կոչվում է նաև «Ժողովրդական ազատութեան կուսակցութիւն») իր որոշումների մէջ յայտնում է. 1) Համագումարը գումարվեց արիւնհեղութեան, աւերման և մարդի ու քաղաքացու տարրական իրաւունքների ոտնահարման տեսարանների ցնցող տպաւորութեան տակ: Գնդակահարումը առանց դատաստանի, տանջանք, գիւղերի և տների այրումն, խմբական կալանաւորութիւնները, խուզարկութիւնները, լրագիրների փակումն և հոկտ. 17-ի մանիֆեստով հանդիսաւորապէս հռչակված քաղաքացիական ազատութեան իրաւունքների ուրիշ յայտնի խախտումները ցոյց են տալիս, որ կառավարչական օրգանները, հակառակ իրաւունքի և քաղաքական նպատակայարմարութեան հանրածանօթ պրինցիպներին, գործադրում են զինուորված ուժ: Համագումարը որոշեց. 1) արտայայտել կուսակցութեան անունից ջերմ բողոք կառավարչական օրգանների յիշեալ գործողութիւնների դէմ, որոնք վիրաւորում են բարոյական զգացումը և խախտում են ոչ միայն հոկտ. 17-ի մանիֆեստի հռչակած սկզբունքները, այլ և գործող օրէնսդրութեամբ ճանաչված քաղաքացիների մինիմալ իրաւունքները. 2) Համարել սահմանադրական-դեմոկրատական բոլոր անդամների համար [illegible] պարտաւորութիւն բողոքել իշխանութեան վերոյիշեալ զեղծումների դէմ ներկայացուցչական ժողովի առաջ, երբ նա [illegible] և պահանջել անմիջապէս դատաստանի ենթարկել այդ չարագործների բոլոր ուղղակի և անուղղակի յանցաւորներին. 3) Մամուլի վերաբերմամբ: Ռուսական մամուլը ցենզուրական ճնշման և վարչական հալածանքների երկար շրջանում յամառաբար պաշտպանում էր այն միտքը, որ խօսքի ազատութեան անհրաժեշտ պայմանն է այնպիսի կարգ, երբ մամուլը պատասխանատու է միայն դատարանի առաջ քրէական օրէնքով նախատեսված գործողութիւնների համար: Համագումարը հարկաւոր է համարում մի անգամ ևս յայտնել, որ իրաւական պետութեան գաղափարին ծանօթ չէ մամուլի առանձին յանցանքը: Տպագրական խօսքը կարող է ծառայել միայն իբրև գործիք ընդհանուր յանցանքներ կատարելու համար: Նոյեմբերի 24-ի կանոնները այդ սկզբունքի կոպիտ խախտումն են հանդիսանում:

*

«Մշակի» այսօրվայ համարում տպում ենք Օզերովսկու հայերին ուղղած կոչը, որի մէջ քաջ զինուորականը աշխատում է ապացուցանելու, որ ինքը անաչառութեան տիպար է: Այդ դէպքում ցանկալի էր իմանալ, ինչու պ. Օզերովսկին նոյն գովելի անաչառութիւնը ցոյց չը տուեց և թիւրքերի վերաբերմամբ, ինչու նրանց ևս չը սպառնաց պատժել, երբ նրանք ամբողջ ամիսներ փակել էին ճանապարհը, թալանում էին հայերին, կողոպտում էին հայերի տրանսպորտները: Շատ լաւ բան է անաչառութիւնը, բայց որքան դժուար իրագործելը:

## ԲԱՐԲԱՐՈՍ ՁԵՌՔ

Աւերակներ են...

Անցնում ենք մի շարք՝ հրդեհի մատնված կեղտոտ փողոցների միջով. չեն երևում նաւթային բուրգերը. անցորդը՝ իր սովորական զգուշութեամբ, չէ աշխատում ծածկել հագուստը նաւթային կաթիլներից: Հրդեհը բաւականին յարգել է այդ տեսակէտը, մաքրելով փողոցի երկարութիւնը նաւթային վիշապներից... Անաւոր գոլորշին, սև թուխպի նման չէ ծածկում այլ ևս երկնքի երեսը: Իսկ ծովը, բնական դժոխքի այդ վկան, անզօր է բոլորովին խափանելու արեգակի լոյսը... Նա երևում է տեղ-տեղ, մինչև իսկ նուաղ, հիւանդ մարդու օրգանիզմի նման, անզօրաբար զգալով բժշկի կարեկցութիւնը... Գործը չէ եռում: Աշխերոնեան թերակղզին ցոյց է տալիս բոլորովին մեռած տրամադրութիւն, բացակայում է շինարար հեւքը... [illegible] քաղաքը մատնված է մի չը տեսնված [illegible], [illegible] բանուորներից: Նրան տիրում են այլազան «երկրպագողները», ցեղային մի առանձին հպարտութեամբ... [illegible] որոշ անկիւններ, [illegible] հաճոյ, նրանք արհամարհանքով նայում են անցորդի վրա [illegible] աչքերով, մէկ-մէկ էլ սպառնում, քմծիծաղ տալիս ու անցնում...

Տխուր յիշողութիւնները թելադրում են ինձ [illegible] աւելի արժատական լինել քան երբեք. ակամայ [illegible] թռիչքի վրա, ուզում եմ ի նկատի ունենալ մի [illegible] կէտ: Եթէ կեանքը չէ միակ պայման, ապա ուրիշ՝ [illegible] կարծես, տեղի տալով ինչ որ [illegible], որոնք բայց քանդելու, շինելու մասին երբեք չեն մտածում... Այնպէս ինչպէս [illegible] գործ կայ, «մի քանի» ֆիրմաների համար, [illegible] ազգութեան պատկանող մարդն էլ հեշտութեամբ ճարվում է, բայց որ գլխաւորն է, պակասում է վերաշինող ոգին, որից և—գործ չէ առաջ գնում—այս է կառավարիչների սովորական պատասխանը... Վրա հասնող մի շարք գործադուլներն էլ պակաս աջակից չը դարձան գործի [illegible]:

Այնուամենայնիւ՝

Հեռու լինելով խորհրդատու մտքերից, իմ նպատակն է նկարագրութեան միջոցով որոշ տեսակի գաղափար տալ ընթերցողին Բալախանի ներկայ դրութեան մասին: Տխուր է պատկերը, տեսարանը ճնշիչ տպաւորութիւն է գործում վրադ, կարծես թէ [illegible] կանգնած եմ կրակոտների հայրենիքի, այրված փլատակների վրա... Չորս կողմս ամայի անապատ է, երևում են միայն թափթփված երկաթներ, բիր-բիր [illegible] նման... [illegible] անցնում է [illegible], նայում եմ մեր հին «[illegible]», [illegible] խորհրդաւոր քան ևս, [illegible] գործունէութեամբ, նենգ ժպտով բարեւում է, աչքերի տակով խեթ նայում ու անցնում: Հայ շատ քիչ, համարեա թէ չը կայ: Հանրածանօթ «տարապայմանը», նաւթային սկզբնաւորութեան այդ վկան առաջ ու պարզապէս [illegible] այլ ևս թիւրքերի [illegible] նաւթը, օտարներ [illegible] դուրս [illegible] ներ գտնել... Փարաւոր Ներոնն է թագաւորում այստեղ:

Իսկ ինչ որ հայկական է, համարեա թէ չը կայ. տեղ-տեղ երևում են կանգուն ֆիրմաներ, թաղված համատարած ծուլութեան մէջ, բայց դրանք այնքան բախտաւոր են, որքան հայ անունն չը կրելու համար... Այսպիսով՝ [illegible] ասպարէզից անհետանում է հայկական կապիտալը, տեղի տալով ինչ որ Մուխտարովների, Նօբելների և Շիբաևների, որոնց հայ բանուորը բնաւ մուտք չէ գործում... Իրապէս դժուար է հայերիս դրութիւնը, քանի որ ամեն տեղ էլ հալածում են մեզ. սակայն, գործնական աշխարհում ամեն ինչ իր որոշ շրջանառութիւնն ունի: Խօսում է Մանթաշևեանի ֆոնդը, բայց դա դեռ գործի սկիզբն է: Վերաշինենք աւերակ Բալախանին, եթէ ուզում ենք, որ մի քանի հազար բնակիչներ այնտեղից հաց ուտեն, գործի կպչենք քանի դեռ ուշ չէ, այլապէս՝ դժուար կը լինի մեր կացութիւնը, [illegible] մեզ...

Ս. Զանեան

## ԲԱԳՎԻ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

I

Վերջին մի քանի ամիսների ընթացքում, Կովկասի մահմեդական ազգաբնակութեան ուղեղում, Բագւում, տեղի են ունեցել մի շարք փոփոխութիւններ, որոնք արժանի են լուրջ ուշադրութեան: Նոյն քաղաքի թիւրք հասարակութեան, աւելի ճիշտ՝ այդ նրա ղեկավար շրջաններում առաջ են եկել բաւական [illegible] կարծիքների չէզոքված տարբերութիւններ, որոնք ծնունդ են տուել նոր համախմբումների, նոր կուսակցութիւնների:

Հայ-թիւրքական լարված յարաբերութիւնները՝ Բագւում, ստեղծել էին այդ երկու տարրերի միջև մի համարեա չինական պարիսպ: Հայը՝ թիւրքին, թիւրքը՝ հային ենթարկում էր կատարեալ բօյկօտի: Թիւրքերը, եթէ մասամբ համարձակվում էին մտնել հայերի թաղը, առևտրական հարևանցի յարաբերութիւններ ունենալու համար, հայերը՝ առհասարակ խոյս էին տալիս թիւրքերի հետ շփումից: Եւ այդ պառակտումը շատ ծանր էր ազդում երկու ժողովուրդների, և մանաւանդ թիւրքերի, տնտեսական կեանքի վրա: Ինչպէս յայտնի է, Բագւի տնտեսական ձեռնարկների մեծամասնութիւնից զրկված է թիւրքերից: Երբ երկու անգամ նաւթային կենտրոնը ողողվեց արիւնով, հայերը և մասամբ ուրիշ ազգի քրիստոնեաները դատարկեցին նրանց [illegible] և փոխադրվեցին հայկական մասում: Եւ էլ այնուհետև չը վերադարձան: Այդ փաստը մահմեդական սեփականատէրերին հասցրեց մեծագոյն հարուած:

Միւս կողմից, չը նայած [illegible] և թիւրք այլ և այլ առևտրականները, [illegible] ուրիշ ասպարէզի [illegible]: Եթէ յիշում են մեր ընթերցողները, հայերն ու թիւրքերը ունեցան մի վէճ—որին միջամտեց և քաղաքային դուման—մասնաճանապարհների առիթով: Մասնաճանապարհները ընդհանրապէս, և [illegible] բացառութեամբ, կազմված են մահմեդականներից: Այդ, թիւրք-հայկական ընդհարումից յետոյ, հայերը պահանջեցին իրանց առանձին [illegible] ունենալ, իրանց թաղում: Մահմեդականները, տեսնելով իրանց շահերը վտանգված՝ ընդդիմացան և [illegible] ինչ որ հայերը բարձրացրին: Բայց իզուր: Ինչպէս որ մահմեդական վաճառականը միայն մահմեդական գնորդի հետ, և [illegible] կեանքի պայմաններում անբաւարար է մահմեդական առևտրականի համար—իբրև այդ ձախորդ դրութիւնը [illegible] մահմեդական ազգաբնակութեան [illegible] զգացմունքի վրա:

Կարծում եմ տնտեսական այս ծանրակշիռ [illegible] պէտք է բացատրել Բագւի վերջին «խաղաղասիրութիւնը», որովհետև մարդկանց դրդումների և գաղափարների ետևը գտնւում է գիտակցաբար կամ անգիտակցաբար, տնտեսական առանցքը, շահը:

Այսպէս թէ այնպէս, Բագուն ներկայացնում է մէկ, արտաքուստ [illegible], բայց ներքուստ կարծիքների [illegible] և խորը բաժանումներով երկուսի պառակտված մի մահմեդական ազգաբնակութիւն: Մի մասը՝ դրդված իր շահերից—և միւսը, որ [illegible] գիտակից գաղափարներ—հակված է երևալ դէպի խաղաղութիւն, բարի յարաբերութիւն հայերի հետ: Դա պէտք է, անկասկած, տնտեսապէս ուժեղ դասակարգը լինի: Իսկ միւս մասը՝ [illegible] երկիւղից ազատ լինելով, և անգիտակից, և կրօնական ու ցեղային նախապաշարմունքներից կուրացած, պատրաստ է, այնուամենայնիւ, «յաղթանակներ» տանել հայերի վրա:

Այդ ընդհանուր նկատողութիւնները գուցէ օգնեն բացատրելու վերջին ժամանակներս մահմեդական ինտելիգենցիայի մէջ տեղի ունեցած հետաքրքիր, բնորոշ շարժումներն ու երևոյթները:

Մեր ընթերցողները գիտեն, ի հարկէ, որ Բագւում հրատարակվող «Հայաթ» լրագիրը ունէր երկու խմբագիր. Ահմեդ բէկ Աղայեւ և Հիւսէյին Զադէ: Առաջինը արդէն բաւական ծանօթ է. նա ուսել է Ռուսաստանում և Փարիզում: Երկրորդը՝ Կ. Պօլսում և [illegible] եղել է նաև արտասահմանում, որովհետև նա ունեցել է, եթէ չեմ սխալվում, բաւական զօրեղ կապեր Երիտասարդ-Թիւրքերի հետ: Հիւսէյին Զադէն, [illegible] աւելի զարգացած, աւելի պատրաստված մարդ է երևում: Գոնէ այդ տպաւորութիւնն են թողել մեզ վրա նրա «Հայաթ»-ում գրածները:

Վերջին ամիսների ընթացքում, յայտնի չէ ինչ պատճառներով, պ. Աղայեւը, որ տիրապետող դեր ունէր «Հայաթ»-ում, հեռացել է նոյն լրագրից և անցել մի այլ թերթի՝ «Իրշադ»-ի գլուխը, որը հրատարակվում է Իսա բէկ Աշուրբէկովի ծախքով, ինչպէս «Հայաթ»-ն ու «Каспій»-ն լոյս են տեսնում Թագիևի օժանդակութեամբ:

Պ. Աղայեւի «Հայաթ»-ից հեռանալու շարժառիթները, որքան որ էլ հետաքրքիր են մեզ համար, անկարող ենք գոհացնել մեր ընթերցողների այդ բնական հետաքրքրութիւնը, որովհետև թիւրք մամուլի էջերում այդ մասին համարեա ոչինչ չը կայ: Միայն գիտենք այն, որ մի կողմից պ. Աղայեւի, միւս կողմից պ. Թօփչիբաշևի և Հիւսէյին Զադէի միջև տեղի է ունեցել մի փոքրիկ, բայց բնորոշ ընդհարում, որի մասին կը խօսենք յաջորդ անգամ:

Տ. Զաւէն

## ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ ԵՒ ՖԵԴԵՐԱՑԻԱ

### VII

Աճեց ու զարգացաւ բիւրոկրատիան: Պաշտօնեաներից կազմվեց մի զօրեղ դասակարգ իր առանձնայատուկ շահերով ու ձգտումներով: Կամաց-կամաց բիւրոկրատիան սկսեց [illegible], հեռանալ հասարակութեան միւս դասակարգերից:

Սկզբներում արքայական էմիսարներն ատում էին ֆէօդալներին, բայց արտաքուստ քաղաքավարի էին նրանց հետ, տիրաբար արհամարհում էին ճորտերին: Յետոյ կամաց-կամաց բիւրոկրատիան բաժանվեց ամբողջ հասարակութիւնից, կազմեց մի ուրոյն դասակարգ իր սեփական շահերով և մանաւանդ իր սեփական բնոյթով ու հայեցողութիւններով:

Բիւրոկրատիան առհասարակ քծնող է դէպի բարձրերը, լաքէյական քաղաքավարութեամբ է վարվում իր հաւասարների հետ, իսկ [illegible] արհամարհող դէպի իրանից ցած կարծածները: Իսկ ինչ իրանից ցած է, համարում ամբողջ հասարակութիւնը: Նրա համար միակ բարձրը «Նորին վերադասութիւնն է», որին գլուխ է խոնարհում մինչև կիսաստուած:

Բիւրոկրատիան ինչպէս հասարակութեան ծառան պէտք է լինի, նրա գործակատարը, նրա «պրիկազչիկը»: Բայց այսօր նա [illegible] տէր է: [illegible] Ժողովուրդը դիմում է որ և է հարցով—պատասխանը լինում է, ամենալաւ դէպքում մի սառը, արհամարհական ժպիտ, [illegible]...

Բիւրոկրատիան հասարակութեան ծառան պէտք է լինի, բայց այսօր [illegible] պետութիւնը, հասարակութիւնն է նրա ծառան, նրա կթանկովը: Նա՝ բնակած ժողովրդի մարմնի վրա, ծծում է նրա բոլոր կենսական հիւթերը...

Մեզանում ամեն ինչ բիւրոկրատիան է ղեկավարում, իսկ ինքը բոլորովին դուրս ենք քշված պետական գործերից: Ժողովուրդը [illegible] զրկված հասարակական ու պետական գործերից, որովհետև այդ գործերը կազմում է բիւրոկրատիան իր [illegible] իր շահի պահանջի համեմատ: Դրանից էլ առաջանում է այն, որ հասարակութիւնն անտարբեր է, միմիայն իր մէջ քաղաքացիական գործերով հետաքրքրվելու զգացումը և պետութիւնը դառնում է նրա համար մի օտար մարմին, մի ծանր բեռ, որից ուրախ կը լինէր ազատվել: Ինչպէս հռոմէական ստրուկի համար անտարբեր էր թէ ով կը լինի Հռոմի տէրը—մի Տրայանոս, թէ մի Օդոակր—այդպէս էլ այժմ բիւրոկրատիան է դարձրել անտարբեր ներկայ հասարակութիւնը:

Աւելորդ չէ ասել, որ արևմտեան Եւրոպայում բիւրոկրատիան զարգացել է III դասակարգից, և միանալով կենտրոնական իշխանութեան հետ, ճնշել է արեան ազնւականութիւնը: Իսկ Ռուսաստանում ներկայ ազնւականութիւնը ծնունդ է առել «չինովնիկներից»—բիւրոկրատիայից և սերտ կապ պահպանել «արեան» հին ազնւականութեան հետ:

### VIII

Բիւրոկրատիան իր վերջնական ձևն ստացաւ Ֆրանսիայում Արև-Թագաւորի՝ Լուդովիկոս XVI-ի օրով, Աւստրիայում—Յովսէփ II-ի և Պրուսիայում—Ֆրիդրիխ II-ի օրով: Իսկ դրանք կոչվում են «լուսաւորված միապետներ»: Դրանք ամենածայրայեղ ներկայացուցիչներն էին վարչական կենտրոնացման սիստեմի: Յովսէփ II-ը [illegible] համարեց իր մօր՝ Մարիա Թերէզայի արած անհագին բարեփոխութիւնները և սկսեց գործել վճռաբար. նա հաւասարեցրեց օրէնքի առաջ ազնւականներին ու ռամիկին, բոլոր դասակարգերի համար ազատ մուտք բաց արեց դէպի զինուորական ու դատաստանական պաշտօնները, որոնք առաջ միայն ազնւականութեան էին վերապահված, խլեց կալուածատէրերից իրանց գիւղացիներին դատելու իրաւունքը, խլեց նրանցից [illegible] իրաւունքն էլ, ոչնչացրեց երկրի մեծ մասում ճորտութիւնը և ճորտերին տուեց իրանց նախկին մշակած հողն իբր սեփականութիւն: Նա գրչի մի հարուածով ոչնչացրեց պատմական ճանապարհով, երկար դարերի ընթացքում առաջացած երկրի վարչական բաժանումները, որոնց հիմքն էր մասամբ աւատական և գլխաւորապէս ազգային սկզբունքը և դրա փոխարէն սահմանեց մի նոր վարչական բաժանում՝ համեմատ կենտրոնական իշխանութեան տեսակէտերի և դիւրութիւնների: Նա հրամայեց վերացնել բոլոր տեղական սովորութիւնները և լեզուները դատարաններից ու բանակներից և գործադրել մի օրէնք և մի լեզու—գերմաներէնը: Եւ այդ բոլորի միակ նպատակն էր [illegible], ապակենտրոնացած երկիրները դարձնել միաձև բիւրոկրատական երկիրներ, որոնք բոլորն էլ խստիւ կապված լինէին կենտրոնական վարչութեան, կայսրի գահի հետ:

Նոյն գործելաձևն էր բանեցնում և Ֆրիդրիխ II-ը Պրուսիայում, նոյնն էր դեռ դրանից բաւական ժամանակ առաջ Լուդովիկոս XIV-ի գործելաձևը: Համարեա նոյնն էր և Պետրոս Մեծի գործելու ձևը: Եւ դեռ այսօր էլ այդ պետութիւնները—Ֆրանսիա, Ռուսաստան, Պրուսիա և Աւստրիա—բիւրոկրատիզմի տիպիքական երկիրներ, նրա հայրենիքն են:

Իսկ դրա հակառակ Ամերիկայի Միացեալ Նահանգները, Շվէյցարիան, Անգլիան, մասամբ Բելգիան ու Հոլլանդիան, Շվեդիան ու Նորվեգիան—իրանց երկրի վարչական ներքին ապակենտրոնացման շնորհիւ միայն—ազատ են բիւրոկրատիզմի հիւծախտից:

Այսպէս ուրեմն պատմական զարգացման ու պատմական փաստերի ուղիով մենք կրկին հասանք մեր եզրակետին.—կենտրոնացում և բիւրոկրատիա, բիւրոկրատիա և կենտրոնացում՝ իրարից բաժանել անկարելի է: Բիւրոկրատիան ծնունդ է խիստ և [illegible] վարչական կենտրոնացման սիստեմի, և ռուս սօցիալ-դեմոկրատական կուսակցութեան «մեծամասնականների» թերթը—Нов. Жизнь-ը պաշտպանում էր այդպիսի խիստ և հետևողական կենտրոնացում, այդ պատճառով էլ մենք ասել ենք, որ այդ թերթը առաջարկում է Ռուսաստանի համար մի այնպիսի վարչական սիստեմ, որը անպայման պիտի ծնի բիւրոկրատիան:

Եւ ինչ է վիճում պ. Բ. Իշխանեանը, [illegible] գիտնականի [illegible] նայում է մեզ [illegible] «սօցիալիստական գրականութեան արսենալից վերցրած զէնքերով»: Բայց արդեօք բարեխղճաբար է վերցնում պ. Բ. Իշխանեանը իր զէնքերը «սօցիալիստական գրականութեան արսենալից»—Ոչ:

Մի քահանայի հարցնում են «տէր-տէր, մարդու մարմնի մէջ որ մասն է ամենադժուարը»:—Տէրտէրն ասում է. «Մազը. Աւետարանում գրած է, որ «երկինք և երկիր անցցեն և մազ մի ոչ անցցէ»:

Ճիշտ այդ տէրտէրի վիճակին են մեր նորահաս ու նոր թխված մի շարք սօցիալ-դեմոկրատները: Խօսում ես փիլիսոփայութիւնից—նրանք պատասխանը որոնում են Մարքսի և Էնգելսի մէջ, խօսում ես—կրօնական հարցի մասին, նրանք էլի այնտեղ, այն «արսենալում» են զէնք որոնում: Խօսում ես ազգային խնդրի, կենտրոնացման, ֆեդերացիայի մասին—նրանք միշտ, ամեն ժամանակ դիմում են 1847-ի Մանիֆեստին, 1850-ական թւերին Մարքսի գրած լրագրական յօդուածներին «Նիւ-Եօրք Տրիբիւն» կամ «Նեօյէ-Րայնիշէ-Ցայտունգ» թերթերում:

Ասում, պնդում ես, որ Մարքսը հանճար է, Էնգելսը տաղանդ, լայն էրուդիցիա—բայց չէ որ նրանք էլ մարդ են, մահկանացուներ, սահմանական ու ժամանակաւոր ուժերով, որ նրանք աշխարհի բոլոր հասարակական հարցերը չեն լուծել վերջնապէս, չեն ուսումնասիրել ամեն ինչ... Ոչ ու չէ լսող չկայ: Գտնում, որ ինչ ես տալիս մի ֆրազ միայն, մի քանի բառ և [illegible] «մազ մի ոչ անցցէ» աչքդ են խոթում իբրպատասխան:

Մենք մեր յօդուածներում ասել էինք, որ Մարքսն ու Էնգելսը չեն զբաղվել յատկապէս ազգային հարցով: Պ. Բ. Ի. «սօցիալիստական արսենալից» դուրս է քաշել հետևեալ զէնքը. «Այն չափով, որով կը վերանայ անհատի շահագործութիւնը անհատի ձեռքով, նոյն չափով կը վերանայ մի ազգի շահագործութիւնը միւսի միջոցով»—ասել են Մարքսը և Էնգելսը: Եւ ընթերցող, դա է միակ ֆրազը, «մի քանի բառը», որ նուիրել են այդ մարդիկն ազգային խնդրին: Իսկ պ. Բ. Իշխանեանի բերած միւս քաղուածները սուրբ-Մարքսի և սրբոյն Էնգելսի Աւետարաններից—օրինակ Թիւրքիայի մասին՝ մութն է, վիճելի և ազգային խնդիրները չը շօշափող:

Եթէ սօցիալիստ հեղինակաւոր գրողներից մէկն զբաղվել է ազգային հարցով, ֆեդերացիայի խնդրով—դա Կ. Կաուցկին է, որի հեղինակութիւնը պ. Բ. Ի. չէ ուզում ճանաչել, որովհետև «նա ծանօթ չէ» Ռուսաստանի հանգամանքներին:

Աւստրիական սօց-դեմոկրատ «Verus»-ի նոր գիրքն եմ վկայ բերում, պնդելով, որ Կ. Կաուցկի և Verus իբր թէ էլ պօլիտիկայով պաշտպաններ Աւստրիայի և Ռուսաստանի համար ֆեդերատիւ կազմ են առաջարկում, որովհետև

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԻՒՆ

I

Ազատագրական շարժումը գնալով ընդարձակվում է ու խոր արմատներ ձգում: Անհրաժեշտութիւնից հարկադրված լինելով դառնալ յեղափոխական, նա արդէն շտապում է բնորոշել այն մերձաւոր քաղաքակրթական խնդիրները, որոնց կարգի դնելը կը դառնայ անյետաձգելի պահանջ, հէնց որ երկիրը հնարաւորութիւն կը ստանայ դիմելու շինարար աշխատանքի:

Ահա մի այդ տեսակ ձեռնարկութեան սկիզբն էր դրել մօտ օրերս Պետերբուրգում՝ կայսրութեան մէջ բնակվող, այն զանազան ազգութիւնների ներկայացուցիչների համաժողովը, որոնք մինչև այժմ, այսպէս թէ այնպէս հարստահարվում էին և ճնշվում իրանց ազգային զարգացման ու ինքնորոշման մէջ:

Այստեղ կային լեհեր, ուկրայինցիներ (մալօրոսներ), բելօրուսներ, լիտօվացիներ, լատիշներ, էստեր, ֆիններ, հրեաներ, հայեր, թիւրքեր, վրացիներ կիրկիզներ....

Համաժողովում դեռ ևս բոլոր հարստահարված ցեղերը չէին ներկայացվել,—և այդ համաժողովը լիազօրների ժողով չէր: Դա միայն առաջի քայլն էր նոր գործի մէջ—կայսրութեան ազգութիւնների, որքան հնարաւոր է մեծ մասից հաւաքվող պատգամաւորների ապագայ համաժողովների համար հող պատրաստելու, նպատակ ունենալով մշակել և կեանքի մէջ մտցնել նրանց խաղաղ կեանք վարելու չափը և ստեղծելու այնպիսի պայմաններ, որոնք ապահովեն նրանց համար ազատ պրօգրեսիվ (առաջադիմական) զարգացումը:

Համաժողովում կարդացված զեկուցումները վառ գոյներով էին նկարագրում համառուսական աբսօլիւտիզմի, միահեծանութեան ռէժիմի տակ հեծող զանազան ազգութիւնների դառն վիճակը: Հարցը վերաբերում էր ոչ միայն այն իրաւազուրկ դրութեան, որ վիճակված էր ռուսական բոլոր հպատակներին, այլ և այն խիստ ճնշումներին, որ ռուսացման քաղաքականութեան դրօշակի տակ նպատակ էր դրել ինքնուրոյնութիւնից զրկել բոլոր ազգութիւններին և կանգնեցնել նրանց ազգային ինքնաճանաչութեան զարգացումը: Այդ զեկուցումները իր ժամանակին լոյս կը տեսնեն և, անկասկած, մեծ լոյս կը սփռեն ռուսացման քաղաքականութեան [illegible] պատմութեան վրա, այդ գոգոլ-շչեդրինեան էպօպէի մէջ «պօմպադուրների» կռիւը «ազգայնութեան» հետ: Այն ժամանակ կը դառնան այդ առաջին համաժողովի գրական հետեւանքներն էլ, որոնց բազմակողմանի գնահատութիւնը այժմս անհնարին է:

Ողջունելով համաժողովի այդ նախաձեռնութիւնը, ես այս անգամ կը բաւականանամ արտայայտելով իմ խորհրդածութիւններս ազգային պահանջի մասին առհասարակ:

Սկզբունքով ազգային իրաւունքները ընդունում են ներկայումս բոլոր առաջադէմ կուսակցութիւնները, որոնք և հոգ տարան մտցնելու իրանց ծրագրի մէջ համապատասխան յօդուածներ: Բայց դա դեռ ևս չէ նշանակում թէ հարցը լուծված է, և արդէն գտնված է, մեր հայրենիքի ազգագրական կազմի մէջ մտնող, բազմատեսակ ազգութիւնների modus vivendi-ն: Առաջիկայ դեռ ևս մնում է՝ յամառ կռիւ մղել ազգային նախապաշարմունքների դէմ, այլ և ինտենսիվ կուլտուրական ու լուսաւորիչ գործունէութիւն ցոյց տալ, որը նպատակ ունի պարզաբանել ու յարմարեցնել ազգային զարգացման խնդիրները այլ և այլ կուսակցութիւնների նպատակների հետ (մանաւանդ ծայրայեղ ձախակողմեանների): Ներկայ րօպէում նոյն իսկ դժուար է նախատեսել այն բոլոր բարդութիւնները և մասնաւոր, տեղական խնդիրները, որոնք առաջ կը գան ազատ Ռուսաստանում, նրա մէջ բնակվող զանազան ազգութիւնների զարգացման ճանապարհի վրա:

Սակայն ազգային հարցի մէջ կայ մի կէտ, որը հէնց այժմ կարելի է և պէտք է լուսաբանել պատշաճաւոր կերպով: Խօսքս նացիօնալիզմի մասին է, որով [illegible] չափով թէ պակաս, վարակված են համարեա բոլոր ազգային շարժումները: Նրանց մէջ բոլոր «ազգայինը» որ կազմում է այդ շարժումների հոգեբանութիւնը, անհրաժեշտ է խիստ կերպով զանազանել «ազգայնականութիւնից»: Ահա հէնց դրա մասին էլ կը խօսեմ ներկայ յօդուածում:

II

«Նացիօնալիզմ»-ը իր ծայրայեղ արտայայտութեամբ—շօվինիզմով (ազգամոլութեամբ) ազգային զգացմունքի և գիտակցութեան հիւանդութիւնն է: Կարելի է տարբերել այդ հիւանդութեան երկու տեսակը,—մէկը՝ որ յատուկ է հարստահարող ազգերին, միւսը՝ որ բնորոշ է հարստահարված ազգերին, երբ որում պաշտպանողականից դէպի յարձակողական անցնելը կատարվում է զարմանալի հեշտութեամբ: Երբեմն պատահում է, որ այդ երկու տեսակները միանում են: Հարստահարված ազգը՝ ազգայնամոլութեամբ (նացիօնալիզմով) հիւանդ լինելով, որպէս [illegible] հարստահարողի, նոյն է ասպարէզ դուրս գալիս իր նացիօնալիզմով ու մի ուրիշ աւելի թոյլ ազգի վերաբերմամբ դառնում հարստահարող: Պատմութիւնը այդ երևոյթի մասին տալիս է բաւականաչափ կենդանի օրինակներ, միևնոյն ժամանակ ներկայացնում է ազգային հակառակութիւնների ու թշնամութիւնների անվերջ պատկերներ, նոյն իսկ մօտ—ազգակից ցեղերի մէջ: Միջազգային հակակրանքները, ցաւելով պէտք է ասել, պատահում են աւելի յաճախ և երևան են գալիս աւելի զօրեղ կերպով, քան թէ միջազգային համակրանքները: Ահա հէնց այդ երկպառակութիւնն էր գլխաւոր պատճառը, որ արդէն շատ վաղուց մարդկութեան բարեկամները սկսեցին անկեղծ զզուանքով վերաբերվել հէնց այդ փաստին, որ մարդկային ցեղը ազգերի է բաժանված և որ մինչև օրս դեռ ևս բոլորովին արխիւ չեն յանձնված բոլոր մարդկանց ապագայ միութեան երազները—մի ազգ կազմելու և ի մի ձուլելու բոլոր լեզուները::

Այստեղ տեղը չէ հերքելու այդ ուտօպիան: Դրա փոխարէն ես ինձ թոյլ կը տամ համառօտ կերպով ձևակերպել ազգայնութեան այն հասկացողութիւնը, որը, թւում է ինձ, բղխում է ժամանակակից գիտութեան հիմունքներից:

1) Հարկաւոր է զանազանել ազգութիւնը ցեղից: Ցեղը—մարդաբանական երևոյթ է, ազգը—կուլտուրա-հոգեբանական: Ցեղերը իրար են խառնվում (скрещиваются) և ի մի ձուլվում, և կարելի է նախատեսել հեռաւոր ապագայում,—երբ մարդկութիւնը վերջնականապէս կը յաղթանակէ բնութեան դէմ,—բոլոր մարդկութեան ի մի ձուլվելը բարձր կարգի—մի ցեղ դառնալը: Ընդհակառակը ազգերը ի մի չեն ձուլվում: Մի քանի ազգագրական բազմազանութիւններից մի ազգութիւն կազմելը հնարաւոր է միայն այնտեղ, ուր այդ բազմատեսակութիւնները դեռ ևս ազգային ուժ կերպարանք չեն ընդունել: Այդ է ահա ազգերի [illegible] կամ նախապատրաստութեան սովորական ճանապարհը: Ազգայնութիւնը կուլտուրական առաջադիմութեան արդիւնքն է, և երկրագնդի վրա կան շատ ցեղեր, որոնք դեռ ևս չեն մշակել իրանց ազգային կերպարանքը: Այն ազգերը, որոնք ունեն արդէն կազմակերպված ազգայնութիւն, կարող են իրանց համար աննպաստ պայմաններում կորցնել նրան, և այնուհետև նրանք ապազգայնացվում են (денаціонализмъ), որը ի հարկէ համապատասխան է կուլտուրա-հոգեբանական այլասերման: Յայտնի են ոչ միայն անհատական, այլ և խմբական դէպքեր ազգափոխութեան (շատ յաճախ լեզուափոխութեան հետ միասին), որոնք կատարվում են յօժարակամ, երբեմն էլ բռնի կերպով: Եւ երբ, այնպէս թէ այնպէս, անհետանում է մի որ և է ազգութիւն, մանաւանդ եթէ նա արդէն տուել է կուլտուրական ստեղծագործութեան որոշ գրաւականներ, այն ժամանակ միշտ կարելի է ենթադրել, որ այդ կէտի վրա մարդկութիւնը մի որ և է բան կորցրել է, մի ինչ որ բանից զրկվել է:

2) Ազգայնութեան բնաւորութիւնը, որպէս կուլտուրա-հոգեբանական մի երևոյթի, դեռ ևս վերջնականապէս չէ լուսաբանված: Այնուամենայնիւ, այժմից արդէն կարելի է հաստատել հետևեալը. ազգայնութեան երևոյթը մարդկային հոգեկանութեան (պսիխիկայի) մտաւոր և կամքի շրջանին է պատկանում, և բաւականին հեռու է զգացմունքի շրջանից, ունենալով դէպի նա միայն կողմնակի յարաբերութիւն: Զանազան ազգութիւններին պատկանող մարդիկ իրարից տարբերվում են բնաւորութեամբ կամ մտածողութեան ձևերով և կամքի գործունէութեան եղանակով և, դրան ընդհակառակ մօտենում են իրար զգացմունքներով: Դրանում համոզվելու համար բաւական է միայն վեր առնել համապատասխան երևոյթները իրանց ամենաբարձր և ամենապայծառ արտայայտութիւններով: Վերցնենք օրինակներ բարձրագոյն մտաւոր և կամքի գործունէութիւնից,—և մենք նրանց մէջ իսկոյն կը նկատենք ազգայնութեան խիստ արտայայտված նշանները: Այսպէս կոչված «ազգային հանճարը», կամ, աւելի պարզ ասած, ազգային հոգեբանութեան կերտուածքները աւելի լիակատար ու ակներև կերպով նշմարվում են անգլիացիների՝ մօտ Բէկօնի, Նիւտօնի, Լօկկի, [illegible], Շեքսպիրի, Բայրոնի և այլ հեղինակների ստեղծագործութիւնների մէջ, նմանապէս Գլադստոնի գործունէութեան մէջ: Գերմանացիների մօտ՝ Կանտի, Հէգելի, Գէօթէի և ուրիշների ստեղծագործութեան, նոյնպէս և Բիսմարկի ու Բեբելի գործունէութեան մէջ: Ֆրանսիացիների մօտ՝ Կօնտի ստեղծագործութեան և Վ. Հիւգօյի պօէզիայի մէջ, քաղաքական գործունէութեան մէջ, օրինակ

այդ ձևի կազմն աւելի լաւ են համարում քան ներկայ բիւրօկրատիկան ռէժիմը:

Դա արդէն խակական սոփեստութիւն է: Պ. յօդուածագիրը «զօռով» ենթադրութիւններ է անում...

Բացի դրանից, պ. Իշխանեանի այդ վերաբերմունքը դէպի Կաուցկին շատ էլ «անբիծ» կամ korrekt չէ. երբ հարկաւոր է, նա նրան ներկայացնում է իբր մի կիսաստուած, իսկ երբ իրան ձեռնտու չէ, նա նրան համարում է «անծանօթ» և այլն...

Դրանք օտարներ են և անծանօթ. բարի, չար բարի. բերենք վկայութիւն բուն երկրից, Ռուսաստանի սօցիալ-դէմօկրատներից:

Բաց ենք անում սօց.-դէմօկրատ փոքրամասնականների կամ Գ. Պլեխանովի կուսակցութեան թերթը, «Начало»-ի № 1-ը և կարդում նրա առաջնորդողում, որը հանդիսանում է թերթի, ուրեմն և կուսակցութեան «հաւատոյ հանգանակը», նրա դաւանանքը:

Նախ երկար ու բարակ բացատրում է դասակարգերի կռիւը, պրոլէտարիատի յաղթական ընթացքը և նրա մօտաւոր ու հեռաւոր պահանջները և ապա դիմում է ազգութիւնների խնդրին:

«Յեղափոխութեան քաղաքական խառնաշփոթութիւնը Ռուսաստանում յառաջանում է ազգութիւնների կռւով, որոնց ինքնակալութիւնը բացառիկ օրէնքներով և ազգութիւնները սարկացնող քաղաքականութիւնով դրել է իրար թշնամական յարաբերութեան մէջ: Ազգային հարցը գործնական կեանքում վճռուած է Շվէյցարիայում և Ամերիկայի Միացեալ-Նահանգներում դէմօկրատական հանրապետութեան միջոցով: Ազգերի հէնց այդպիսի ազատ դաշնակցութեան պէտք է հասնենք և մենք Ռուսաստանում:

Պարզ և ակներև համեմատութիւն. սօց-դէմօկրատական «փոքրամասնականների» (որոնց ձեռքն է այսօր պրոլէտարիատի ղեկը մնացում) օրգանի կարծիքով՝ նրանք, սօցիալ-դէմօկրատները պէտք է հասնեն այնպիսի կազմի, որպիսին գոյութիւն ունի Շվէյցարիայում և Միացեալ-Նահանգներում: Իսկ այնտեղ, պ. Բ. Ի., գոյութիւն ունի ոչ թէ կենտրոնացած հանրապետութիւն, այլ խիստ ապակենտրոնական ֆէդէրատիւ կազմ:

Պ. Իշխանեանը առաջ է բերում «մի գեղեցիկ պասսաժ» Մարքսից, ուր ասուած է, որ մի ազգի կեղեքումը միւսին կը վերանայ բուն սօցիալիստական իդէալի իրականանալուց յետոյ:

Հաւատում ենք այդ պասսաժին. նա լաւ կը լինի, փայլուն, դրախտային: Բայց մինչ այդ, մինչև այդ Եդեմի իրականանալը ինչ է առաջարկվում: Ի հարկէ ոչինչ, որովհետև պ.պ. Իշխանեանները Մարքսի ու Էնգելսի մօտ պատրաստի ֆորմուլներ չեն գտնում, իրանք էլ մտածել չեն ուզում...

«Մեր նպատակն է, ասում է «Начало», բաց անել առանձին ազգութիւնների առջև քաղաքական և կուլտուրական ինքնուրոյն զարգացման ուղիները»:

Այո, դա ամենաառաջին պարտականութիւնն է իսկապէս արմատական սօցիալիստական բոլոր կուսակցութիւնների, եթէ նրանք ունեն փիլիսոփայաբար զարգացած իսկական ղեկավարներ: Առանց ազգութիւնների ինքնուրոյն քաղաքական և կուլտուրական զարգացման միօրինակ և աղքատ կլինի համայն մարդկութեան քաղաքակրթութիւնը: Ազգերի այդ ինքնատիպ զարգացման անհրաժեշտութիւնը չեն զգում միայն փիլիսոփայական լայն զարգացումից զուրկ անձերը, որոնք ընդունակ են խորհելու միայն պատրաստ ֆորմուլներով և որոշ կուռքերի գրութիւններով, սահմանափակ ու միակողմանի զարգացումով:

Մի անգամ երբ ապահովված կը լինի ազգերի ինքնուրոյն քաղաքական և կուլտուրական զարգացման գործը, այնուհետև կը բացվի դասակարգային պայքարը:

Ազգութիւնների ազատ զարգացման խնդրից—«ոչ պակաս մեր նպատակն է նաև բոլոր ազգութիւնների մէջ ջոկել կամ բաժանել պրոլէտարիատը բոլոր միւս դասակարգերից և Ռուսաստանի բոլոր ազգութիւնների պրոլէտարիատները միացնել կազմել մի ընդհանուր յեղափոխական բանակ: Դա կստեղծէ մի շատ սերտ համաստուական կապակցութիւն, բայց կստեղծէ այդ ոչ թէ առանձին ազգութիւնների կամքի հակառակ, այլ նրանց դասակարգային հակասութեան շնորհով, որն անխուսափելիօրէն վերլուծում է ազգութիւնների կապիտալիստական կազմակերպութեան ժամանակ: Մենք կը միացնենք ազգութիւնները ոչ թէ պետական իշխանութիւնով, այլ կապիտալիստական պետութեան դէմ կռիւ մղելով»: («Начало» 1905 թ. Նոյեմբ. 13, № 1).

Այո, պ. Բ. Իշխանեան, «սօցիալիստական գրականութեան արսէնալից» է վերցրել Գէօրգի Պլեխանովի կուսակցութեան օրգանը իր բոլոր զէնքերը, բայց նա վերցրել է մտածելով նկատելով Ռուսաստանի ներքին հանգամանքները: Լինելով լայն փիլիսոփայական զարգացման տէր մարդիկ՝ Կ. Կաուցկիները, Verus-ները, «Начало»-ի խմբագրութեան անդամները և այլն—ըմբռնել, հասկացել են, որ ազատութեան գաղափարը, ազգային ազատ զարգացման ու կուլտուրայի խնդիրը ոչ միայն դէմ չէ սօցիալիստական վարդապետութեան, այլ ընդհակառակը—նրան նպաստող, նրա ուղին հարթող է:

Ուրեմն «սօցիալիստական գրականութեան արսէնալից» վերցրինք մենք զէնքեր և դրանցով իսկ ապացուցեցինք, որ ապակենտրոնական-ֆէդէրատիւ կազմը միակ ելքն է Ռուսաստանի ազգութիւնների համար:

Եզրակացութիւն. 1) Ռ. Ս. Դ. բանւորական կուսակցութեան մեծամասնականները ձգտում են Ռուսաստանում ստեղծել խիստ օրէնսդրական կենտրոնացում. դա կը ստեղծէ բիւրօկրատիզմը եթէ ապակենտրոնացում չը մտցվի: Եթէ նոյն իսկ ապակենտրոնացում մտցվի ներքին, վարչական գործերում, բիւրօկրատիզմը կը թեթևանայ, բայց չի վերանայ: Չի չքանայ նաև ազգային քայքայիչ հարցը և ազգութիւնների կռիւը:

2) Ֆէդէրատիւ կազմը ամենևին դէմ չէ պրոլէտարիատի շահերին և սօցիալիզմին, այլ նպաստող նրան:

3) պ. Բ. Իշխանեանը չէ ըմբռնել վիճաբանութեան գլխաւոր նիւթը—բիւրօկրատիզմի և կենտրոնացման սերտ կապը: Նա, ծանօթ չը լինելով Անգլիայի ու Ֆրանսիայի վարչական սիստէմներին՝ առաջինին անւանում է «կենտրոնացած», երկրորդին—բիւրօկրատիզմից զուրկ:

Ես մի կողմ եմ թողնում պարոնի յօդուածի միւս մասերը, որոնց մէջ նա, ծամծելով մի պատահական թիւրիմացութիւնից, որ աչքաթող էր մեր շտապով գրած լրագրական յօդուածներում հրէական «Բունդի» մասին, ուղղում է մեզ հայերէն վիրաւորական ածել խօսքեր և միաժամանակ ինքն ընկնում է նոյն սխալի մէջ լեհական սօց.-դէմօկրատական կուսակցութեան վերաբերմամբ:

Վերջացնում եմ յօդուածս, յուսալով որ հարցը բաւական պարզվեց: Իսկ ֆէդէրալիզմի էութեան, նրա առաւելութիւնների մասին մենք կրկին դեռ շատ առիթներ կունենանք խօսելու:

Աամակ

## ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Կարս, յունվարի 9-ին

Օր չէ անցնում, որ մեզ մօտ մի ցաւալի, աւելին կասեմ՝ վրդովեցուցիչ դէպք չը պատահի, թէև մեր Աստուածապահ քաղաքի հայ ազգաբնակութիւնը ամեն կերպ աշխատել է և ներկայումս էլ աշխատում է հնարաւոր եղածի չափ խուսափել անախորժութիւններից, ընդհարումներից, գրգռիչ ցոյցերից, միտինգներից և այլն, և այլն: Սակայն ցաւ ի սիրտ պիտի խոստովանենք, որ որքան նա (Կարսի հայ ժողովուրդը) իրան հեռու է պահում, զգաստ ու խաղաղ է պահում, այնքան յաճախ են վրդովում նրա խաղաղութիւնը, անդորրութիւնը, այնքան շատ վիրաւորանքներ են հասցնում նրան չարամիտ, չարանենգ իշխանաւորներն ու թունալից օձերը—մատնիչներն ու շպիոնները...

Ինչպէս յայտնի է, ռուսաց—ընդհանուր հիւպատոսը Էրզրումում—այժմ գտնվում է պաշտօնական գործով Թիֆլիս: Նրան դիմաւորելու և ուղեկցելու իր պաշտօնատեղին—Կարին—եկել է Կարս հիւպատոսի ամենասիրելի և ամենահաւատարիմ գաւազը (кавасъ) մի կասկածելի Թիւրք, Մահմէդ Իսմայիլ-օղլի անունով: Այդ վայրենի Թիւրքը լսելով, որ Կարսում հայերն ու մահմեդականները առայժմ շատ սիրով են ապրում իրար հետ, կամենում է Թիւրքիայում իր կատարած սխրագործութիւններից մէկն էլ այստեղ կատարել, քաջ գիտենալով, որ դիւրահաւան ռուս իշխանութիւնը հաւատ կընծայէ իր մատնութիւններին... և... մի քանի անհաւատներ—«գեաւուրներ» կը տուժեն իր կուրացած աչքերի առջև...

Վերոյիշեալ գաւազ Մահմէդը ամսիս 7-ին, առաւօտեան ժամը 10-ին, շնորհ բերելով քաղաքիս 2-րդ մասի պրիստաւ պարոն Ալիբէկովի մօտ (յայտնի բարի պաշտօն է...) դառնապէս գանգատվում է թէ ինքը մի 5 րօպէ առաջ «Կաւկազ» հիւրանոցի առջև ենթարկվեց երկու զինված հայերի յարձակմանը, որոնք կանգնեցնելով սահնակը հիւրանոցի առջև՝ իջան ցած և վզակոթին բռունցքներ իջեցնելով և անզգայ դարձնելով, խլեցին նրանից պետական (казенное) հրացանը... և խնդրում է կազմել արձանագրութիւն և որ ամենաքամահելին է, եթէ կայանատեղին կասկածելի հայերին, ինքը—գաւազը—կարող է ճանաչել «բարբարոս գեաւուր հայերին...»

Թող ներվի մեզ այստեղ փակագծի մէջ ասել, որ «Կաւկազ» հիւրանոցը գտնվում է քաղաքիս Նաբերեժնայա կոչված հրապարակի վրա, մի յայտնի փողոցում. այնպէս, որ եթէ օրը ցերեկով մէկի վրա յարձակվեն գործեն, Թալանեն, կողոպտեն անցորդներից շատերը կարող էին օգնութեան հասնել կամ տեսնել այդ դէպքը և վկայ դուրս գալ: Բայց, ինչպէս ասած է՝ «սուտի ոտները կարճ կը լինեն», այնպէս էլ ներկայ դէպքում «ուղղափառը» Թալանվում է օրը ցերեկով «գեաւուրներից» և ոչ ոք չէ տեսնում...

Բայց և այնպէս մեր յարգելի ընթերցողներին բաւականութիւնից չը զրկելու համար, պիտի աւելացնեմ, որ այն ստորին ոստիկանը, որը այնտեղ նոյն ժամին կանգնած է եղել իբրև «ПОСТОВОЙ», պ. Նահանգապետի հրամանով արձակվեց պաշտօնից... Պատճառը այն է, որ նա քննութեան ժամանակ ասել է թէ՝ ինքը ականատես չէ եղած այդտեսակ մի «բարբարոսութեան» և թէ ինքը բոլոր ժամանակ կանգնած է եղել իր տեղում, որին վկայ են շատ անցորդներ:

Գաւազը սպառնում է իր պատրոնի միջոցով գանգատ բերել Կարսի հայերի վրա Կովկասի գլխաւոր իշխանութեանը—Վօրօնցով-Դաշկով իշխանին,..

Բարի ճանապարհ... իր զրպարտութիւններով ու սպիտակ շառով-սուտով:

Տեղացի

## ՆԱՄԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐԻՑ

Տաթև, 12 յունվարի:

Զանգեզուրը վերջին ամիսներում ալէկոծման մէջ էր. անհատական սպանութիւններ կատարվում էր ամեն տեղ, խմբական յարձակումները սկսվեցին նոյեմբերին:

Թուրք Սիսիան գիւղը ժողովելով շրջակայ Թուրք գիւղերից հրոսակներ, նոյեմբերի 25-ին յարձակվեց հարևան Թագա գիւղի վրա, հայերը հասան վերջինիս օգնութեան և ուժեղ հարուածով միահամուռ խորտակեցին Թուրքերի ոյժը և աւազակային ապագայ ձգտումները: Այդ դասը Թուրքերին խոհեմացրեց:

Դեկտեմբերի 26-ին Ստեփանեանին և իր ուղեկցող 11 հոգուն աղուդեցիք ճանապարհին սպանեցին. նոյն աղուդեցիք մի քանի օր առաջ յարձակվել էին զազախների փամփուշտների բեռան վրա, սպանել քրէհապար հային և գրավել բեռները, որոնց մէջ կար և բաւականին փող. հրացանաձգութեան ժամանակ մօտակայ հայերը հասնում են Ստեփանեանին օգնութեան, գտնում են նրան սպանված, փոխարէնը կատարում են Թուրքերին և այրում նրանց տները:

Նոյն դէպքի յաջորդ օրը Դարաբասի 150 տուն Թուրքերը կանչում են իրանց հետ խառն ապրող 50 տուն հայերի քահանային իբր թէ խորհրդակցութեան, [illegible] սպանում են նրան իր եղբօր որդու հետ և նշան տալիս հայերին կոտորելու. հասնում են հրացանաձգութեան ժամանակ մօտիկ հայերը և սկսվում է սոսկալի կոտորած և աւերումն, սպանվում է 6 հայ և 200 Թուրք:

Երկու օր յետոյ Վաղատնու Թուրքերը Քիւրդլարի Թուրքերի հետ յարձակվում են օգնութեան և խիստ հարուածով մեծ վնաս հասցնում երկու կողմին: Նոյն ժամանակ Թուրքերը յարձակվում են Երիցաթումբ փոքր գիւղի վրա, չորս դիակ թողնելով փախչում են: Այդ ժամանակներում Զիզիմլուի Թուրքերը քշում են տեղերից ոչխարը և սպանում զանազան տեղերում երեք հոգի. հայերը յարձակվում են գողերի և մարդասպանների վրա և մեծ հարուած հասցնելով աւազակներին 2 Զիզիմլուին և հարևան գիւղին՝ յետ են դառնում: Նոյն ժամանակ Թուրքերը յարձակվում են Զանգեզի 4 տուն հայ գիւղի վրա Ղափանում, շրջակայ հայերը հասնում են և յետ խլելով աւարը՝ ազատում հայերին:

Նոյնպիսի դասեր տուել են Թուրքերին և դարալագէզցիք:

Յարաբերութիւնները խիստ լարված են: Սպասվում է ընդհ. նահանգապետ. տեսնենք ինչ կը յանձնէ այս տարօրինակ պատերազմական խիստ լարված դրութիւնը ու վիճակը:

Հարար, Խոզնավար, Ալիղալի, Մինքենդ, Չէյվա գիւղերը ցրված ապրում են հայ գիւղերում:

Ներսէս վարդապետ

## ՕԶԸՐՕՎՍԿՈՒ ԿՈՉԸ

Զինուորական աւագ Իվան Երասսովիչ դեն. Օզըրօվսկին, յունվարի 1-ին հրատարակել է Ագդամում հետևեալ կոչը, ուղղված հայերին: Այսուհետև իր այդ կոչով պատմութեան մէջ անմահացող զինուորականը այն սպան է, որին յանձնվել էր Եւլախ—Շուշի տրակտի ազատ երթևեկութեան պահպանութիւնը: Առաջ ենք բերում այդ կոչի թարգմանութիւնը:

«Ասկերանցիներ, գիւթված չար ոգուց և ղեկավարվելով նրա հրէշաւորներով, որոնք միայն ձեր թշնամիներն են հանդիսանում և պղծված եկեղեցիներից, դուք լաւ գործի չէք ձեռնարկել. դուք գրաւել էք ճանապարհը, որ նշանակված է պետական, հասարակական և ժամանակ կարիքների համար. դուք գազանաբար սպանել էք ձեր համաքաղաքացի-մահմեդականների ազատ երթևեկութիւնը այդ ճանապարհով, դուք փակել էք մթերքների ազատ մուտքը քաղաք, որպէս զի սովամահ անեք մահմեդական շուշեցիներին, որոնք կարող էին զէնքը ձեռքին յարձակվել ձեր համաքաղաքացիների հայերի վրա նրանց հացը խլելու, բայց նրանք վշտանալով նայելով իրանց մեռնող մերձաւորներին՝ չեն ուզում խախտել իրանց խաղաղ-քաղաքացիական պարտքը և պահպանվում նոր խռովութիւնների պատճառ դառնալ պետութեան մէջ: Այդ դեռ քիչ է. դուք յանդգնեցիք երկու անգամ յարձակվել մթերքների կարաւանի վրա, որ քաղաք էին տանում իշխանութեան կարգադրութեամբ զինուորական ոյժի ուղեկցութեամբ: Դուք կրակ բացիք անգէն սայլապանների և ձիերի վրա, որոնք տանում էին կենսական մթերքների կարաւանը, չը նայած որ խոստացել էիք խոչընդոտ չը հանդիսանալ կարաւանի շարժմանը: Օգտվելով կարաւանի ուղեկցող ոյժի չափաւորութիւնից և այն հանգամանքներից, որի մէջ գտնւում էր զօրքը և որը վճռել էր ձեզ յանձնել կենսական մթերքը, քան թէ ռուս քաղաքացիներից արիւնը թափելու պատճառ դառնալ, դուք գրաւեցիք ամբողջ մթերքը, ուրիշի սեփականութիւնը, որ այնչափ կարևոր էր սովամահ շուշեցիների և նրանց համար, որոնք կերակրում են իրանց ընտանիքները այդ ապրանքների տեղափոխումով:

Մի մոռանաք, որ դուք խախտել էք ռուս քաղաքացիների պարտքը և այդպիսով ձեզ զրկել քաղաքացիական իրաւունքներից:

Դուք աւազակային յարձակում էք գործել մեծ ճանապարհով անցնող կենսական մթերքների կարաւանի վրա, որ ուտելիքների պաշար էր տեղափոխում Շուշու սովամահ ազգաբնակութեան համար: Զէնք բարձրացնելով զօրքի վրա և ընդդիմադրելով նրան՝ դուք խռովութիւն էք սարքել պետական իշխանութեան դէմ:

Դուք երդմնազանց դաւաճաններ և յանցաւորներ էք, որովհետև խոստացել էիք չը ձեռնարկել թշնամական գործողութիւններ, ոչ կենսական մթերքների կարաւանի դէմ և ոչ էլ զօրքի, որոնք մտնում էին վստահաբար Ասկերանի բերդին:

Մեծ է ձեր մեղքը և ձեր պատասխանատուութիւնը իշխանութեան և օրէնքի առաջ: Խաղաղ ժամանակներում այդպիսի գործերի համար ենթարկվում են տաժանակիր աշխատանքի, իսկ պատերազմական դրութեան ժամանակ՝ կախաղանի: Խելքի եկէք և թող զիջող վերաբերվի դէպի ձեզ իշխանութեան գթասրտութիւնը: Զգացէք անկեղծաբար և աշխատեցէք գոնէ մասամբ ուղղելու ձեր ձեռքով կատարած չար գործը: Կատարեցէք այնպէս, ինչպէս ես յայտարարել եմ ձեզ Ասկերանի մօտ ձեր պահապանի միջոցով: Երեք օրվայ ընթացքում վերադարձրէք Թալանած ապրանքը, բոլոր ֆուրգոնները, ձիերը, իսկ պակասը լրացնել դրամով: Կատարեցէք բոլորը, մինչև յունվարի 4-ի առաւօտը և ձեր վճիռը ստորագրողների միջոցով յայտնեցէք Թեմուր-բէկ Հասանբէկովին՝ Ագդամ, կամ ուղղակի ինձ: Ո՛չ մի զիջում կամ խնդրանք մթերքները յետ դարձնելու վերաբերմամբ չեմ ընդունում: Իսկ եթէ չէք ցանկանում քաւել ձեր մեղքը, եկէք խելացի. ուղարկեցէք ծերերին, ձեր կանանց, երեխաներին ապահով տեղեր: Ձեր յամառութիւնը պատասխան կը տայ իմ ձեռքերին: Յիշեցէք, իմ կողմն է այժմ արդարութիւնը, իրաւունքը և նրանց հետևից էլ Թնդանօթները: Եթէ իմ ձայնը չէ լսվում, Թնդանօթների ձայնը աւելի բարձր լսելի կը լինի, քան իմը: Բայց աւելի լաւ է, որ լսելի լինի նրա ձայնը հայերի և Թուրքերի մէջ կնքված խաղաղութիւնը պահպանելու: Ես իմ պարտաւորութիւնը կը համարեմ, որ առանց արիւնահեղութիւնների լուծել Ասկերանի հարցը և այդ գործի մէջ խնդրում եմ ձեր հոգևոր հօր աջակցութիւնը և Աստուծոյ բարի օգնութիւնը:

Ասկերանցիներ, ես, որ ճանապարհների հաղորդակցութիւնների հրամանատար եմ Շուշուց մինչև Եւլախ, ասում եմ ձեզ.

Լսեցէք ինձ և այդ ձեզ օգուտ կը բերի. ես այժմ զօրքերի և Թնդանօթների հետ Շուշի կը տանեմ կենսական մթերքների կարաւանը և կանգնում մնում այնտեղ, ինչպէս Քրիստոս աւանակի վրա նստած Երուսաղէմ էր մտնում, իսկ եթէ չարագործները կը համարձակվեն կանգնեցնել ինձ ճանապարհին կամ [illegible] ուղարկել, ես կը վարվեմ նրանց հետ ամենախիստ միջոցներով և ցոյց կը տամ ձեզ, որ ես աւելի եմ, քան ձեր կոմիտէները, որոնց դուք ձեր սրտի մէջ ատում էք և որոնց առաջ խոնարհվում էք ամենախոր զզւանքով: Մտածեցէք, երբ ես դուրս գամ Ագդամից իմ զօրքերի հետ, ծիծ է կարող խօսք տալ, որ Թուրքերը չեն յարձակվի ձեր գիւղերի վրա: Դուք տաճկին էիք, որ կրակ բացիք զօրքի վրա, որոնք հաւատում էին ձեր երդումնազանց խօսքերին, մի սպասէք ուրեմն ինձանից նախազգուշացում իմ գործողութիւնների ժամանակ: Ճանապարհից երկու վերստ հեռաւորութեան վրա ամեն մի զինված համախմբում ես կը համարեմ ինձ և իմ զօրքին արգելք և կը վարվեմ այնպէս, ինչպէս Թելադրում են պատերազմական ժամանակի կանոնները. կրկնում եմ՝ ճանապարհները դէպի Շուշի երկու վերստ տարածութեան վրա պէտք է ազատ լինեն զինուորված համախմբումներից, իսկ բերդերում, փակ տեղերում ոչ ոք չպիտի լինի: Այս թող լինի ձեզ նախազգուշացում, ուրիշ բանի չը սպասէք: Յիշեցէք, թէ ինչպէս հարիւր տարի առաջ ռուսաց զօրքերը պաշտպանում էին Ասկերանը, պաշտպանելով և ձեր ազատութիւնը: Մի մոռացէք ուրեմն ինձ ներկել ձեր արիւնով ձեզ համար թանկագին այդ պատերը: Յիշեցէք, որ շատով ծննդեան մեծ տօնն է գալիս, երբ մարդկութիւնը մաքրված Յորդանանի ջրով դիմում էր վերածնված կեանքի, և Աստուած չանէ, որ խաղաղութիւնը հաստատելու համար արեան բաղնիսով լուանամ ձեզ: Չը մոռանաք, որ իմ պահանջների մէջ ես ղեկավարվում եմ անաչառութեամբ կամ ազգայնական ատելութեամբ: Հայերի մասին 20 տարի առաջ հրատարակված մի գրքում իմ յայտնած կարծիքը ապացոյց է, որ ես հայերի անկեղծ բարեկամն եմ. և դեկտ. 17-ին էր, որ հայերի համար ես ուժով ուղարկեցի 17 ֆուրգոն կենսական մթերք, որը դուք Թալանեցիք դեկտ. 26-ին և այժմ ես զղջում եմ, որ ի սէր հայերի ես զրկեցի 17 մարդու իրանց սեփականութիւնից: Հաւատացէք, որ եթէ Թաթարներն էլ այդպիսի մի քայլ անելու համարձակվեն ինչպէս դուք Ասկերանում՝ ես նրանց դէմ էլ նոյնպէս ձեռք կառնեմ ամենախիստ միջոցներ, ինչպէս ձեր դէմ: Բայց իմացած եղէք, որ մինչև չը վերահաստատվի երաշխաւորված խաղաղութիւնը Ագդամից մինչև Շուշի, մինչև Եւլախ յետ չը դարձնէք Թալանած ապրանքը, ես բաց չեմ Թողնի ոչ մի ֆուրգոն հայերի համար և ուղարկվող ապրանքը ես կը խլեմ յօգուտ վնասվածների: Գիտեմ, որ իմ արդարացի գործողութիւնների համար ես մահվան կը դատապարտվեմ ձեր անօրէն դատարանի վճռով, սակայն իմացած լինէք և դուք, ասկերանցիներ, որ ես քաղաքացի եմ, հասարակութեան ծառայ, ընտանիքի հայր և եթէ ես մեռնեմ ձեր կոմիտէի ձեռքով, ես չեմ ների ձեզ իմ ապագայ մահը, իմ համաքաղաքացիների վիշտը և իմ երեխաների և մերձաւորների արցունքը: Ես ձեզ ասում եմ. եթէ սպանէք ինձ զէնք բարձրացնելու դէմ կենդանութեանս ժամանակ, այնպիսի մի խնճոյք կը սարքեմ ինձ համար, որ կը դղրդան շրջակայ լեռները, որոնք առանց այն էլ շատ են ցնցվել ձեր անօրէնութիւնից:

Իսկ եթէ մէկն ու մէկը ուզում է ինձ տապալել հրացանաձգութեան ժամանակ, թող նա իմանայ, որ կռուի ժամանակ ես գլխիս ունենալու եմ սպիտակ փափախ և դեղին-կարմրագոյն բաշլըղ»:

1906 թ. 1-ն յունվարի, Ագդամ:

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիս քաղաքի և նրա գաւառի ժամանակաւոր գեներալ նահանգապետը հրատարակել է հետևեալ կարգադրութիւնը: «Ի լրումն պարտադիր կանոնների, Թիֆլիս քաղաքի և նրա գաւառի ժամանակաւոր գեներալ նահանգապետի զինուորական դրութեան յայտարարած տեղերի օրէնքների 19 յօդուածի հիման վրա (1892 թ. հրատ. օրէնք. II հատ. յաւել. ընդ. նահ. հատ. 23 յօդ.). 1) Բոլոր հրացան և սառ զէնք ունեցողները պարտաւոր են դրանց յանձնել կոմենդանտի վարչութեանը և մերձաւոր զօրամասերին այս պարտադիր որոշումների յայտարարելուց երեք օրվայ ընթացքում, ու ստանալ ստացագիր: 2) Այն անձինք, որոնց մօտ, երեք օրվայ ժամանակամիջոցը անցնելուց յետոյ, զէնք կը գտնվի, կը համարվեն խռովարարներ և կը դատվեն պատերազմական ժամանակի օրէնքներով: 3) Այն տնատէրերը, որտեղ կը գտնվեն զէնքի, փամփուշտի և պայթուցիկ նիւթերի պահեստներ, այդպիսիները պատրաստելու համար, կը կալանաւորվեն իբրև սեփականատէրերի հետ միասին և դատի կենթարկվեն պատերազմական ժամանակների օրէնքներով պատժվելու: 4) Եթէ զէնքեր, ռազմամթերքներ կամ պայթուցիկ նիւթեր կը գտնվեն փոխադրանքներում, նկուղներում, կամ թէ մի այլ անորոշ անկիւնում, այդ դէպքում պատասխանատուութիւնը, այն կանոնների 3 յօդ. յիշած կարգով, ընկնում է տնատէրերի վրա:[1] Թիֆլիս քաղաքի և գաւառի ժամանակաւոր գեներալ նահանգապետ, գեներալ-մայոր Տիմոֆեյեվ:

—

Լուր է պտտում, որ Պետերբուրգից մօտ օրերս այստեղ է գալու մի յատուկ մասնաժողով քննելու Կովկասում պօստ-հեռագրատան ծառայողների գործադուլի պատճառները և իբր նա արդէն Ռօստով է հասել:

—

Ներկայումս մինիստրներին և այլ բարձրաստիճան անձերին ուղարկված է սենատոր Կուզմինսկու սահմանափակ Թւով տպված հաշիւ Բագւու քաղաքի և Բագւու նահանգի մէջ նրա կատարած քննութեան մասին: Այն բաժինը, որ պարունակում է նահանգական ադմինիստրացիայի բնորոշումը, սենատոր Կուզմինսկին վերջացնում է ասելով, Թէ պէտք է փոփոխել նահանգի կառավարութեան կարգը: Հաշուի վերջաւորութիւնը նուիրված է դատաստանական ատեանի գործունէութեան տեսութեանը: Սենատոր Կուզմինսկին իր կոչման բարձրութեան վրա է գտել դատաստանական ատեանը: (Русск. Вѣд.)

—

Պետերբուրգ հասաւ սուրհանդակը գեներալ Լինևիչի զեկուցումով հաղորդակցութեան ճանապարհների մինիստրին գործերի դրութեան մասին Սիբիրի երկաթուղու վրա: Զեկուցման բովանդակութիւնը խիստ գաղտնի է պահվում, բայց մասնաւոր խօսակցութեան մէջ սուրհանդակ-գնդապետը ասաց, որ ճանապարհին բաւական յաճախ ստիպված էր նա գործ ունենալ մի քանի կառավարութիւնների հետ, որոնք իւրաքանչիւր անգամ նրան անցագիր էին տալիս: Սուրհանդակի խօսքով, ոչ մի յոյս չը կայ, որ Սիբիրը շուտ խաղաղվի (Ber. Tag.):

—

Դեկտեմբեր ամսին Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետ Ալիխանովը յայտարարել էր, որ խիստ կը պատժէ այն պահակազինուորներին (պատրուլ) և կօզակներին, որոնք խանութներից և տներից կողոպտում և Թալան կը կատարեն: Այդ հրամանը հետևանք էր քաղաքիս նշանաւոր փողոցների—Դվօրցովայա, Նիկոլաևսկի կամրջի, Արմեանական բազարի վրա գտնվող խանութների գիշերային Թալանների և կողոպուտների, որպիսի գործողութիւնների մէջ, ինչպէս յետոյ պարզվեց, խառն են եղել պահակազինուորները: Ներկայումս Թէ և գիշերները նմանապէս շրջում են պահակազինուորներ, սակայն ամենաբանուկ փողոցների վրա խանութների կոտրելու և կողոպտման դէպքեր կրկնվում են. այսպէս, օրինակ, յունվարի 17-ին գիշերը, Վօրօնցովի արձանի մօտ լրագրավաճառ և ծխախոտավաճառ պ. Յակոբեանի խանութը («Փօլուշկի» նշանակ կրող) կոտրել են և միջից ապրանք և դրամ են յափշտակել: Այդ խանութին կից մշտական, գիշեր ու ցերեկ՝ ոստիկանների օրապահութիւն կայ և բացի այդ՝ կողքին պահակազինուորներ են կանգնած, ուստի ակամայ հարց է ծագում թէ այդ տարօրինակ գողութիւնը ում ձեռքով կարող էր կատարվել այդպիսի մի յայտնի և ապահով տեղում:

—

Մի համակրելի օրինակ. օրիորդ Նինա Ասլամազեանը նուիրել է 100 ր. յօգուտ հայ վիրաւորեալների, ի յիշատակ իր հանգուցեալ մօր Մարթա Ասլամազեանի, որի Թաղումը համեստ կերպով կատարվեց ամսիս 18-ին, առանց սովորական հոգեհացի:

—

Գէօրգի Գապօնը ամենիշխանական Թոյլտուութեամբ այս օրերս գալիս է Պետերբուրգ: Ադմինիստրացիան դէմ էր նրա գալստեան մինչև յունվարի 9-ը:

—

Վերջին ժամանակներս Պետերբուրգի քաղաքապետը բազմաթիւ բողոքներ է ստանում այն անձանց կողմից, որոնց ազգականները և ծանօթները կալանաւորված են: Այդ բոլոր բողոքների մէջ մատնացոյց է արված այն, Թէ օրէնքը խախտվում է, որի հիման վրա կալանաւորված անձերից ոչ մէկը չէ կարող բանտված մնալ մէկ օրից աւելի, հակառակ դէպքում կալանաւորվածները պէտք է յանձնվեն դատաստանական իշխանութեանը:

—

Լեհական Թագաւորութեան բնակիչները Վարշավայի գեներալ-նահանգապետի ուշադրութիւնն են հրաւիրում զինուորական դրութեան վերջացման անհրաժեշտութեան վրա այն պատճառով, որ նա անհնարին է դարձնում կանոնաւոր ընտրութիւնները Պետական Դումայի համար: Գեներալ-նահանգապետը դրան պատասխանեց, Թէ հէնց զինուորական

---

Դամբէտտայի և այլն, և այլն: Որքան աւելի բարձր մտածողը, խոշոր բանաստեղծը, պետական անձը, հասարակական գործիչը, այնքան նա աւելի ազգայնական է իր ձևերով, եղանակով, մտածողութեան ու գործունէութեան բնաւորութեամբ: Ընդհակառակը, եթէ վեր առնենք ամենասաստիկ արտայայտութիւնները, հոգու, որ զգում է սուր տպաւորութիւններ յոյզներ, կրքեր, այդ դէպքում կը տեսնենք, որ այստեղ արդէն անհետանում են ազգային առանձնայատկութիւնները: Օրինակ, փառասէրի, ժլատի, մոլեռանդի և այլն հոգեբանութիւնը իր էութեամբ միևնոյն է մնում զանազան ազգութիւններին պատկանող մարդկանց մէջ: Դրանցից էլ առաջանում են գեղարուեստական տիպերի այնքան յայտնի՝ համամարդկային բնաւորութիւնը, որ ներկայացնում է կրքերի հոգեբանութիւնը: Այդտեղից է նոյնպէս վերցրած կանոնը

ակներև կերպով նշմարվում են երկրի մտաւորական կեանքի, բարձրագոյն ստեղծագործութեան և հասարակական ու քաղաքական գործունէութեան մէջ, ի միջի այլոց նրանց առաջաւոր կուսակցութիւնների կազմակերպութեան ու կռւելու ձևերի մէջ:

3) Ասածից հետևում է, որ ազգային հիմունքի արտայայտութեան սաստկութիւնը գնալով պէտք է պակասի մտաւորական և կամքի գործունէութեան հետ միասին: Ուրիշ կերպ ասած, աւելի պակաս ազգայնական են հանդիսանում ազգաբնակութեան այն խաւերը, որոնց մտաւորական կեանքը շատ չնչին է, կրթութիւնը —սուղ, և որոնք հեռու են մնում քաղաքական պայքարից, հասարակական շարժումներից: Եւ իրաւ, ամեն տեղ էլ պիտի յիշատակել դասակարգերը, օրինակ՝ գիւղացիները և մանր բուրժուազիան այնչափ պակաս ազգային են հանդիսանում, որ նրանց հոգեբանութիւնը, ազ-

աւել են ազգայնական, շարժումները—ժողովրդական չեն, չեն բղխում, ինչպէս ասում էին հին, վիպական ժամանակներում «ժողովրդական հոգու խորքերից», այլ միշտ, սեփականութիւնն են կազմում ինտելիգենտին երբեմն դասակարգային և աւելի յաճախ, քան այն որ ընդունված է անուանել «միջնակարգային»: Դրա հետ են ի միջի այլոց շաղկապված ազգային շարժումների զանազան յատկութիւնները, որոնք երբեմն չփոթել են մտցնում ազգային հարցի ճիշտ լուսաբանութեան մէջ: Այստեղ մենք կը գտնենք և ռոմանտիկ ժողովրդականութիւն, հնութիւնների կամ ժողովրդական նիստ ու կացի նախնական ձևերի անտեղի իդէալականացում, և ձգտում շաղկապելու ազգային հարցի հետ, օրինակ կրօնական ու դաւանաբանական, և, վերջապէս, այն ինչ որ կարելի է անուանել «պաշտամունք» (КУЛЬТЪ) մայրենի լեզուի և իր ազգութեան: Այդ շատեր

ստեղծագործութիւնը և հասարակական ու ժողովրդական նախաձեռնութիւնների զարգացումը, ազգային կուսակցութիւնները ձգտում են հեռացնելու այն արտաքին արգելքները, որոնք խոչընդոտ են լինում ազգութիւնների բնական զարգացման: Անհրաժեշտ է ձգտել ձեռք բերել ազգութիւնների համար ազատութիւն: Լեզուների, բարքերի և տեղական գրականութեան վրա ճնշում ազդող արգելքները պէտք է վերցնել: Ժողովրդական լեզուների և բարբառների մուտքը պէտք է ազատ դարձնել ուսումնարաններին, դատարաններին և այն բոլոր ուրիշ հաստատութիւնների մէջ, որոնք անմիջական շփում ունեն ժողովրդի մասսայի հետ: Ձգտել ազգային զարգացման—այդ ամեն մի ազգութեան բնատուր իրաւունքն է, որը պէտք է ճանաչել անձեռնմխելի:

Եւ երբ այդ իրաւունքները արդէն ձեռք են բերված ու ապահոված են օրէնքով,

բովանդակութիւն, նա՝ կուլտուրահոգեբանական տիպ է, նա-մտածելու և զգալու մի ուրոյն եղանակ է: Սակայն չէ կարելի նրան ընդունել տալ ոչ որի, և շատ [illegible] է նրան սիրել, որովհետև դա կը նշանակէ սիրել ինքն իրան: Ոչ ոք չը պէտք է հրաժարի իր ազգային կերպարանքով (ֆիզիօնօմիա), որովհետև դրանից մինչև ազգային ինքնահաստատութիւնը, շովինիզմը (ազգամոլ) և ազգային նախապաշարմունքները մի քայլ է միայն:

Ազգային զգացմունքի բնական, [illegible] դրութիւնը նա է, որի միջոցին մարդ բոլորովին չէ զգում, այլ գործում է նա, աշխատում է լայնած հանդով «գիտակցական» շրջանակից հեռու, ուշադրութեան չենթարկվելով: Այնպէս այդ ժամանակ միայն ազգային ստեղծագործութեան հետևանքները դառնում են այն ամբողջական

(АВТОМАТИЧ.) անցնելը, այսինքն՝ այնպիսիները, որոնք ամենակարևոր ոյժ գործ դնելով տալիս են ամենից շատ և ամենալաւ հետևանքներ:

Որքան շատ անցնի ազգային ինքնաճանաչութեան սահմանը, այնքան աւելի լաւ: Ազգայնականութիւնը (национализм) իբրև [illegible] անգիտական հասակի, բարդացնում է, առանց այն էլ դժվար, այդ գործունէութիւնը: Մինչև անգամ իր փոքր ի շատէ համակրելի ձևով (օր. ազգայնական ժողովրդականութեան ձևով) նա պատճառում է, այնպիսի վնասներ, որպիսին չեն նախատեսնում նրա հետևողները: Ազգայնականները յաճախ է պատահում որ յետոյ դառնում են ֆանտաստիկաներ: Ֆանտաստիկութիւնը սահմանափակ ցանկալի երևոյթ չէ, ինչպէս և ամեն մի մոլագարութիւն: Եւ եթէ մէկն ու մէկը ֆանտաստիկա դառնալու շաւղի վրա է, մի դրութիւնը բարերար ազդեցութիւն կունենայ ընտրութիւնների վրա: Որպէս լուսաբանութիւն գեներալ-նահանգապետի խօսքերի, Վարշավայի լրագիրները հաղորդում են հետևեալը. «Յունվարի 7-ին, 1-ին և 2-դ ընտրողական յանձնաժողովների շինութեան առջև հաւաքվեցին մարդկանց խմբերը, որոնք վիճում էին այն մասին, որ արդեօք պէտք է յայտարարութիւն տալ յանձնաժողովին թէ չէ: Մօտից անցնող պատրուլը շրջապատեց այդ ընտրողներին և տարաւ նրանց ոստիկանատուն: Հազիւ թէ նրանցից շատերը բնաւ կամենան երկրորդ անգամ փորձել իրանց ընտրողական իրաւունքը: (Русск. Вѣд.)

---

[1] Ծանօթ. Զէնք ունենալու և կրելու Թոյլատուութիւնները պահպանում են իրանց ոյժը այն դէպքում միայն, եթէ այդպիսիները ստացել են Թիֆլիս քաղաքում և գաւառում զինուորական դրութիւն յայտարարելուց յետոյ:

—

Այս օրերս կարգադրութիւն է լինելու, որի հիման վրա պետական խնայողական դրամարկղները պէտք է բարձրացնեն պահնատուներին տուելիք տոկոսը 3,6$^0/_0$-ից մինչև 4$^0/_0$: Այդ կարգադրութիւնն արված է բոլոր տոկոսաբեր թղթերի կուրսն ընկնելու պատճառով և դրանից կախված այն եկամտի մեծանալը, որ բերում են տոկոսաբեր թղթերը, մի հանգամանք, որ ստիպում է հասարակութեանը խուսափել գումարներ դնելուց խնայողական դրամարկղների մէջ և գնել գինը կորցրած տոկոսաբեր թղթերը:

—

Յունվարի 13-ին դատաստանական պալատի առանձին ատեանում, դասակարգային ներկայացուցիչների մասնակցութեամբ, քննվում էր «Наша Жизнь» լրագրի խմբագիրներ իսկական պետական խորհրդական Խօդսկու և պաշտօնաթող եղած կոլլեժսկի ասէսոր Կօտէլնիկովի գործը, որոնք մեղադրվում են քրէական օրէնսգրքի 129-դ յօդուածի 1-ին և 3-դ կէտերի հիման վրա՝ տպելու և տարածելու համար լրագրի 349-դ համարում, որի մէջ զետեղված էր բանւորական պատգամաւորների խորհրդի մանիֆեստը: Պաշտպանում էին երդուեալ հաւատարմատարներ Գօլդշտէյն և Լէյվին: Իր վերջին խօսքի մէջ Խօդսկի ապացուցանում էր, թէ ինքը, որպէս ֆինանսական իրաւունքի պրոֆէսոր, անկարող է համերաշխ լինել «մանիֆեստի անգրագէտ, տգէտ գրուածքի հետ», ուր իւրաքանչիւր քայլի վրա երևում է ֆինանսական իրաւունքի և քաղաքական տնտեսութեան այբուբենի չիմանալը: Երկու մեղադրվողներն էլ արդարացվեցին, բայց մամուլին վերաբերեալ ժամանակաւոր կանոնների հիման վրա Խօդսկի դատապարտվեց 500 ր. տուգանքի:

—

«Народн. Хозяйство» լրագրի Պարիզի թղթակիցը հաղորդում է, որ վաղը մամուլի մէջ կերևայ յայտնի պատմաբան պրոֆէսոր Սենենբօսի հետևեալ նկատողութիւնը. «Ես գիտեմ կատարելապէս արժանահաւատ աղբիւրից, որ պ. Կոկօվցէվ աշխատում էր բանակցութիւններ սկսել Ռօտշիլդի տան հետ, բայց կտրական մերժման հանդիպեց այնտեղ: Ուրիշ բանկիրները, որոնք համաձայնվեցին աւանս տալ ռուսաց կառավարութեանը, այդ արեցին նրանք ի հաճոյս խորհրդի նախագահի, որը նրանց հետ անձնապէս խօսել էր: Որպէս զի ստանայ նրանց համաձայնութիւնը, Ռուվիէ առաջ բերեց Ֆրանսիայի ֆինանսական շահը այն է բուրսը և ռուսական ֆօնդերի անկման առաջն առնել: Նա առաջ բերեց քաղաքական շահը և Ֆրանսիայի պարտականութիւնը օգնել ռուսաց կառավարութեանը՝ կարգը վերականգնելու համար: Ես չը գիտեմ թէ խորհրդի նախագահն ինչ ասեց Կոկօվցէվին, բայց ես կարծում եմ, որ կանգնելով քաղաքականութեան հողի վրա ֆրանսիական բանկիրների հետ, նա պէտք է նոյն ճանապարհն ընտրէր խօսակցելու համար և ռուսական լիազօրի հետ: Նա այդպիսով բացատրեց նրան որպէս Ֆրանսիայի ներկայացուցիչ, որ ֆրանսիական հասարակական կարծիքի համար կարգ վերականգնել չի նշանակում վերականգնել բիւրոկրատիայի միահեծանութիւնը և կաշառակերութեան, գողութեան ու ճնշման ռեժիմը և որ եթէ Ֆրանսիան պարտաւոր է օգնել իր դաշնակցին, Ռուսաստանին, դա կը լինի այն պայմանով, որպէս զի կարելի լինի բարձրացնել նրա վարկը և բարօրութիւնը, վերջապէս սահմանելով սահմանադրական կարգը, անձի ազատութիւնը և մամուլի ազատութիւնը»:

—

Ներկայումս պետական խորհրդին առաջարկված է նոր օրէնքի նախագիծ, որ վերաբերում է անձի անձեռնմխելիութեան: Վճռված է նախագիծը:

—

Աւարտվեց գիւղացիական համաժողովը, ուր որոշվեց բօյկօտի ենթարկել թէ Պետական Դուման և թէ ընտրութիւնները: Համաժողովը տեղի ունէր Պետերբուրգի շրջականերում և այդտեղ ներկայ էին մեծ քանակութեամբ պատգամաւորներ:

—

Պետերբուրգից, յունվարի 21-ին հեռագրում են «Times»-ին. «Եթէ կառավարութիւնը միանգամայն չը փոխէ իր դիրքը դէպի ընտրողական եղանակը ու գործողութիւնները, ակներև է, որ Պետական Դուման յունիսից առաջ չէ կարող գումարվել: Հաւանական է, որ գումարումը մի քիչ էլ յետաձգվի: Ներկայումս ձեռք առնված միջոցների համաձայն, մօտաւորապէս երեք ամիս է հարկաւոր ցուցակագրելու համար այն նոր ընտրողներին, որոնք պաշտօն ունեն ընտրելու, ամբողջ Ռուսաստանում, ընտրողական ժողովների վեց հազար անդամներին: Պէտք է աւելացնել սրա վրա երկու ամիս էլ, թէ ստուգելու մանդատները և թէ հաւաքելու ընտրողական ժողովների անդամներին՝ քաղաքներում և գաւառներում: Վերջապէս պէտք է հաշվել մի կամ երկու ամիս էլ, հէնց պատգամաւորներին ընտրելու համար, նրանց մանդատը, լիազօրութիւնը ստուգելու և հաւաքելու համար Պետերբուրգում: Կառավարութիւնը եթէ լրջօրէն ցանկանայ, ասում է. «Нов Вр.»-ն՝ Դուման կարող է հաւաքվել մարտի սկզբներին, խոյս տալով առանց դժուարութեան այդ յապաղումը, որը արդիւնք է զուտ ձևականութեան»:

—

Լաւատեղեակ աղբիւրից լսել, հեռագրում է «Times»-ի թղթակիցը, որ մինիստրների խորհուրդը թողել է պետութեան օրգանական օրէնքները հոկտ. 17-ի սահմանադրական խոստումների համաձայն փոփոխութեան ենթարկելու գործը և ջանքեր են գործ դրվում, հոկտ. 17-ի մանիֆեստը հաշտեցնելու օգտ. 6-ի մանիֆեստի հետ: Ուրիշ խօսքով, ուզում են Դումայի օրէնսդրական իրաւասութիւնը փոխել խորհրդակցականի: «Молва» լրագրի ասելով՝ եթէ Դուման չը կարողանայ գումարվել, նրա աշխատանքները պէտք է յանձնվին պետական խորհրդին»:

—

Երէկ առաւօտ Պօլովեցևի փողոցի վրա, Պրօկօֆիևի տանը № 9, պօստ հեռագրական ծառայող Անտոն Միխայլովիչ Մայեվսկի իր տան մէջ անձնասպանութիւն է գործել—կախվել: Անձնասպանութեան շարժառիթները յայտնի չեն: Նա մի փոքրիկ տարիքաւոր հասակաւոր ու խնայող մարդ էր, ունէր 15 հազարանոցի կարողութիւն, միայն վերջին ժամանակներս նա եղբօր մօտ էր: Մօտ ժամանակներս ստացել էր իր լաւ ծառայութեան համար Վլադիմիրի 4-րդ կարգի շքանշանը: Ենթադրում են, որ մի ինչ որ ոճրագործութիւն է կատարված:

—

«Нов. Вр.»-թերթը հաղորդում է, որ զինուորական վարչութիւնը միջոցներ է ձեռք առել պարզելու զօրքի տրամադրութիւնը և անյուսալի տարրերը բաժանելու մի քանի զօրաբաժիններից: Զինուորական մինիստրութիւնը ներկայումս սաստիկ զբաղված է զօրքի մէջ կարգապահութիւնը պահպանելու խնդրով. միջոցներ է ձեռք առնում, որպէսզի վերջ տրվի զինուորների մէջ կատարվող ագիտացիայի, գլխաւորներին խիստ պատասխանատուութեան ենթարկելու սպառնալիքով: Ինչպէս հաղորդ. «Ռուս. հեռ. գործ.», ներկայ խառնակ դրութեան պատճառով գնդերում սպաներին արգելված է արձակուրդը: Ներկայումս Ֆինլանդիայում հրատարակվում են 12 սօցիալ-դեմոկրատ լրագիրներ: Բացի դրանցից Ֆինլանդիայի մի քանի քաղաքներում էլ ծրագրվում են հրատարակելու էլի վեց թերթեր նոյն ուղղութեամբ:

—

Շուշու աղէտից վնասվածների օգտին ստացանք Ն. Տառաւնեանից 6ր., նրա ձեռքով հաւաքած 1) ընկ. շրջանում 3ր. 30կ., 2) մի քանի անձերից 1 ր. 85 կ., ընդամենը 11 ր. 15 կ.:

—

Նպաստամատոյց յանձնաժողովի գանձապահ պ. Ալ. Մելիք-Ադամեանց խնդրում է մեզ յայտնել, որ նա ստացել է 1) Վեհ. Հայրապետի Դիւանից 100 րուբլի, որ Մկրտիչ Սարաբեկեանցը «Լումա» ամսագրի միջոցով նուիրել է ի յիշատակ իր հանգուցեալ մօր Թագուհու, կէսը յօգուտ Գանձակի, կէսը յօգուտ Թիֆլիսի որբախնամ հայոց: 2) Գահիրէ քաղաքից «Լուսաբեր» թերթի խմբագրութիւնից 40 անգլիական լիրա (380 րուբլի). 3) Ամերիկայի Փիցբուրգ քաղաքից 11 դոլլար 50 սենտ (22 ր. 35 կ.) Յարութիւն Օհանջանեանից. 4) Նիւ-Եորկից մի պարոնից 42 րուբլի 75 կոպէկ:

—

Թիֆլիսի իրան «Հայրենասէրների կուսակցութիւն» անուանող, մարմինը՝ իր համար անդամներ որսալու և հետևապէս «գունդը» ստուարացնելու մտքով՝ նոր միջոց են գտել—ցրում են անդամակցական տոմսակներ այս ու այն տեղ, հաւատացնելով միամիտ ու վախից բռնված բնակիչներին, որ այդ տոմսն ունեցողը իր գլուխը ընդմիշտ ապահովում է ամեն պատահարքից, փորձանքից և խուզարկութիւնից: Պարզամիտների թիւը շատ լինելով—գրվում են այդ նոր և էժան ձևի «կեանքի ապահովութեան, ընկերութեան անդամ առանց կշռադատելու՝ թէ միւս կողմից ինչ բարոյական խոխորատի են իրանց մատնում: Յիշեալ «կուսակցութիւնը» ևս օգտվում է այդ ճարպիկ միջոցից և հաստատում է անդամակցական անուանացուցակով, որ իրանց համակիրողները բնաւ խուլիգաններ չեն, այլ պատուաւոր քաղաքացիներ, վաճառականներ և նման «որոգայթի» մէջ ընկած արժանապատիւ անձինք:

—

«Н. Х.» թերթը մատնացոյց է անում այն հանգամանքի վրա, որ ֆինանսների մինիստրը իր զեկուցման մէջ «գիտութեամբ պակսեցրել է պետական պարտքի իսկական թիւը: Օրինակ—պարտքի յիշած գումարի մէջ չէ մտել 150 միլ. Մենդելսոնի առևտրական տան կարճ ժամանակով վերացրած պարտքը, որից միայն վճարված է 15 միլ.: Ուստի ցոյց տուած 481 միլ. պարտքի վրա պէտք է աւելացնել 135 միլ. էլ, այսինքն ընդամենը 616 միլիոն րուբլի:

—

Բիւրօկրատական շրջաններում Ն. Ն. Կուտլերի պաշտօնից հեռանալու լուրերը հաստատվում են: Դրա պատճառը համարում են ծագած թիւրիմացութիւնը նրա ագրարական բարենորոգութիւնների ծրագրի առիթով: Բարձր իշխանութիւնը այդ ծրագիրը գտաւ շատ առաջամտական և Ն. Ն.-ին առաջարկեցին փոփոխութիւնների ենթարկել: Իր համոզմունքներով նա գտաւ, որ այդ անկարելի է անել և աւելի լաւ համարեց հեռանալ պաշտօնից: (Р. В.)

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. Յունվարի 10-ին վախճանվեց տեղացի հարուստ Մելքոն Ամիրխանեան: Հանգուցեալի ժառանգները իրանց հօր յիշատակը յաւերժացնելու համար նուիրեցին Հայ Յեղափոխական Դաշնակցութեան—300 ր., հայոց դպրոցին—200 րուբ., Մարինսկի դպրոցին 200 ր., տեղական գրադարան-ընթերցարանին—50 ր., տեղական կազմակերպվելի միլիցիային—50 ր., և 200 ր., ս. Կարապետ եկեղեցու քահանաներին. այդ գումարը պէտք է մնայ անձեռնմխելի գանձարանում և քահանաներն ամեն տարի պէտք է ստանան դրա տոկոսը և կատարեն հանգուցեալի յիշատակին հոգեհանգիստ: Անցեալները վախճանվեց Դաւիթ Տէր-Ստեփանեան, որը 15 տարի ուսուցչութիւն է արել Սղնախի հայոց դպրոցում: Հանգուցեալը համարվում էր Սղնախի հայոց բեմի հիմնադիր և մեծ ծառայութիւն էր մատուցել նրան մանաւանդ ութսունական թւականների սկզբում: Հանգուցեալը ունէր ձիրքեր և շնորհք, սակայն անձնատուր լինելով հարբեցողութեան՝ կորցրեց իր ընդունակութիւնները՝ հասնելով հոգեկան աննորմալ կացութեան: Տէր-Ստեփանեանի անցեալը գնահատելի է. ափսոս, որ այդ չը ցանկացան հասկանալ տեղիս քահանաները, որոնցից ոչ մէկը չը ցանկացաւ մի քանի խօսք ասել հանգուցեալի անցեալի մասին... Հանգուցեալին պատվելու համար թաղման ներկայ էին աշակերտներն ու աշակերտուհիները հայոց դպրոցի՝ իրանց ուսուցիչներով: Ուսուցչական խմբից դրված էր պսակ:

## ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Յունվարի 17-ին առաւօտեան մօտ ժամը 5-ին Մաքերի տանը (Անդրէևսկի փող.) բնակւող Իվան Անտիպինի 10 տարեկան աղջ.—Եւգենի անունով, «Մօնտէ Կրիստօ» տեսակի հրացանի հետ խաղալիս, պատահմամբ, տեղն ու տեղը սպանեց իրան:

—

10-րդ քաղաքամասի պրիստաւը զեկուցանում է ոստիկանապետին, որ յունվարի 17-ի լոյս գիշերը՝ մօտ երեկոյեան 9-ը ժամին գաղտնի ոստիկանութեան ունտէր օֆիցեր Գլասօն Օմելչակի վրա, Կվիրիլսկի փողոցով տուն վերադառնալիս, յարձակվեցին 3 անյայտ չարագործներ, որոնցից մէկը բռնեց յետևից նրա ձեռքը, իսկ միւսները խլեցին նրանից արքունական ատրճանակը № 30583 և սուրը ու փախան: յանցաւորներին ձերբակալելու համար միջոցներ են ձեռք առնված:

—

Յունվարի 18-ին, առաւօտեան ժամը 10-ին տեղացի Թօմա Սօլօմօնովիչ Ագիրովը, որը բնակվում է Շեմախինսկի պերեւլ. իր սեփ. տանը, խանդի զգացմունք ծանր կերպով վիրաւորեց իր կնոջը, որը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոցը. յանցաւորը ձերբակալված է:

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

18 յունվարի

ՌԱԴՕՄ, 17 յունվարի: Շնորհիւ ձեռք առած եռանդուն միջոցների նահանգը խաղաղվում է: Բազմաթիւ ձերբակալութիւններ են արված: Օստրովցում բռնված է բանւորների ռազմիկ կազմակերպութիւնը: Մի քանի տներ, որտեղ օրէնքի հակառակ ժողովներ են տեղի ունեցել—դրված են սեկվեստրի տակ: Գեներալ-նահանգապետ Բէռնը շրջում է ամենաանհանգիստ գաւառները: Գմին գիւղացիները, որոնց վարչութիւններից դուրս է ձգված ռուսաց լեզուն,—հպատակութիւն են ցոյց տալիս, յայտնելով, որ գործում էին յեղափոխականների սարսափի ազդեցութեան տակ: Հարկերը սկսվում են կրկին հաւաքվել:

ՌԻԳԱ, 17 յունվարի: Այսօր գիշերով Գերտրուդինսկի փողոցի մի տնից կրակ բացին ոստիկանների ձիաւոր պահակախմբի վրա: Մի ոստիկան վիրաւորված է թեթև: Ժամը 7-ի մօտերը փողոցի միջից հրացան էին արձակում ոստիկանական վարչութեան վրա: Շինութեան մէջ գտնված կիսավաշտը պատուհանի փեղկից կրակ բացեց: Հետևանքները անյայտ են. կան վիրաւորներ:

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ, 17 յունվարի: Պալատի անդամները և մինիստրները կէսօրից յետոյ ժողովվեցին Ֆօլկէտինգի դահլիճում: Մինիստր-նախագահը կարդաց արքայական ծանուցագիրը:

ԼՈՆԴՈՆ, 17 յունվարի: (Րէյտէր) Թագուհին թերևս կը գնայ Կոպենհագեն: Թագաւորի գնալը կախված է Քրիստիան թագաւորի թաղման օրից, որովհետև Էդուարդ թագաւորը պիտի լինի Լոնդոնում պարլամենտի բացման համար՝ փետրվարի 6-ին:

ԽԱՐԿՈՎ, 17 յունվարի: Գելֆերիխի գործարանում զէնքի ոյժով և բռնութեամբ դեկտ. 13-ին ընդդիմադրութեան գործի համար քննութեան են կանչված 133 յօդուածի առաջին կէտով—134 մարդ, որոնցից 22-ը գտնվում են հսկողութեան տակ, 10-ը ազատ են թողնված:

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ, 17 յունվարի: Երէկ արտիլլերիական կրակին մատնվեց Սալուգարդօն գիւղը, որի բնակիչները հրաժարվում էին տալ ջարդերի խռովարարներին, որ տեղի ունեցան Օսէթիայում դեկտեմբերի վերջերին: Գիւղը ռմբակոծվեց 6 ռումբով:

ԲԵԼԳՐԱԴ, 17 յունվարի: Կառավարութիւնը յայտնեց սկուպշինային, որ յետ է վերցնում փոխատուութեան նախագիծը, իսկ երկաթուղային գծի զինուորման ծախքերը ծածկելու համար մտցնում է համապատասխան օրինագծեր: Սկուպշինային ներկայացրված են Գերմանիայի Չեռնագորիայի հետ առևտրական դաշնագրութիւնների նախագիծը: Բուլղարիայի հետ պօստային դաշինք կապելու հարցը քննվելու չէ ներկայ նստաշրջանի մէջ:

ԱՍՏԱԲԱԴ, 17 յունվարի: Անդրկովկասեան բժշկական մասնաժողովը հրաւիրում է գթութեան քոյրերին—ռուս-պարսկական սահմանում բացվելիք հսկիչ կէտերը: Վարձատրութիւնը՝ 75 րուբլի ամսական, ծառայութեան ժամանակամիջոցը 8 ամսից պակաս չէ լինելու:

ՀՌՈՄ, 17 յունվարի: (Ստեֆանի) Պատգամաւորների պալատում մինիստր-նախագահ Ֆորտիսը յայտնեց, որ նոր կաբինետը երկրի ընդհանուր քաղաքականութեան մէջ ոչինչ փոփոխութիւններ չի մտցնի: Իտալիան հաւատարիմ է մնում իր դաշնակիցներին: Երկրի ֆինանսական դրութիւնը թոյլ չէ տալիս հարկերը պակասեցնել: Անհրաժեշտ է կառուցանել երկաթուղային գծեր աւերութեան նպաստների համար, մտցնել երկամեայ զինուորական ծառայութիւն — միաժամանակ զինուորագրութեան ենթակայ մարդկանց թիւը աւելացնելով:

ՌԻԳԱ, 17 յունվարի: Երէկ երեկոյեան, յեղափոխականների ռազմիկ խմբի ձերբակալված անդամներին ուղարկելու ժամանակ՝ կենտրոնական բերդի խուզարկու բաժնից—նրանք փորձեցին փախչել: Երկուսին գնդակահար արեց զինուորական պահակախումբը, երրորդը փախաւ անվնաս:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 17-ին յունվ: Վերջին ժամանակներս արքունական բանկի մէջ թղթադրամների մուտքը խոշոր չափով աւելանում է, ըստ որում յունվարի 8-ին, դրամարկղում եղած, թղթադրամների գումարը հասնում էր 104, 3 միլիոն րուբլու: Այդ պատճառով բանկը անհրաժեշտ համարեց 25 միլիոն րուբլի թղթադրամներից դուրս հանել գործածութիւնից: Յունվարի 17-ին այդ որոշումը ի կատար ածվեցաւ: Այդպիսով գործածութեան մտած թղթադրամները 2,290 միլիոնից իջաւ մինչև 1265 միլիոնի:

ՌԻԳԱ, 17-ին յունվ: Այսօր առաւօտը ժամը 8-ին, քաղաքի կենտրոնում գտնվող ոստիկանական շինութեան մէջ եղած խուզարկու բաժանմունքի վրա յարձակում է կատարվել, ուր պահում էին վերջի ժամանակ կալանաւորված նշանաւոր քաղաքական յանցաւորներ: Յարձակվողները, ծանր կերպով վիրաւորեցին քաղաքապահին և մի զինուոր պահակի, միւս զինուորին սպանեցին, ապա ներս խուժելով բանտը, դուրս տարան այնտեղից հինգ հոգի ամենակարևոր քաղաքական յանցաւորներ: Յարձակվողների մէջ կային և կանայք: Ոստիկանատանը պահապան նշանակված զինուորների կէս-րօտան չը կարողացաւ ժամանակին օգնութեան հասնել, որովհետև յարձակումը կատարվեց արագութեամբ և միանգամայն անսպասելի կերպով:

ՍԱՐԱՏՕՎ, 17 յունվ: Մարիինսկի իգական գիմնազիոնում առաջացած վէճը վերջացաւ 20-ից աւելի ուսուցիչների հրաժարականով: Բացվում է նոր մասնաւոր գիմնազիոն: Մանկավարժական խումբը կազմված է գլխաւորապէս Մարիինսկի գիմնազիոնից հեռացածներից:

ԿՕՍՏՐՕՄԱ, 17 յունվարի: Դատաստանական պալատի որոշմամբ «Կօստրօմսկի Լիստօկ» թերթը դադարեցրած է մինչև դատաստանական քննութիւն կատարելը:

ՍԻՄԲԻՐՍԿ, 17 յունվարի: Ագրարական շարժումը գաւառում վերջնականապէս խաղաղվում է:

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ, 17 յունվարի: Եկաւ նահանգապետ Բօլօտովը: Եկամուտ չունենալու պատճառով փակված Նիժնեսետսկի արքունական գործարանի բանւորները միջնորդութիւն բարձրացրին իրանց տալու կապալով այդ գործարանը կառավարելու կօօպերատիվ հիմքերով:

ԿԱԼՈՒԳԱ, 17 յունվարի: Պատասխանատուութեան են ենթարկվում Մօշչեվսկի գաւառական համագումարի ամբողջ կազմը մատակարարութեան գումարը գիւղացիներին բաժանելու կայացրած ապօրինի որոշման համար:

ՎԼԱԴԻՍԼԱՎ, 17 յունվարի: Պօկրօվսկու կեանքի դէմ սպանութեան փորձ անելու և ազօթատան վերնսարահում վեց ատրճանակ գրաւելու պատճառով քաղաքի հրէայ ազգաբնակութիւնը ենթարկվում է 3000 րուբլի տուգանքի: Տուգանքը վերցնելու համար խնդրելու գնացած պատգամաւորները տուգանքը վճարելու ժամանակամիջոցը յետաձգեցին մինչև փետրվարի 1-ը: Մարիամպոլսկի գիմնազիայի աշակերտները յունվարի 9-ին չը պարապեցին, այլ միտինգ գումարեցին, որի հետևանքը եղաւ այն, որ մի քանի աշակերտներ արձակեցին և երեքին կալանաւորեցին: Յունվարի 10-ին պահանջեցին նորից ընդունել արձակվածներին: Նահանգական ատեանը կօզակներ պահանջեց: Աշակերտները ցրվեցին տները: Գիմնազիան փակվեց:

ՍՕՍՆԻՑԻ, 17 յունվարի: Սօսնիցի զեմստվոյին ժողովը միաձայն որոշեց՝ միանալ հոկտեմբերի 17-ի միութեան և ներկայացնել Թագաւորին ամենահպատակ ուղերձ:

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ, 17 յունվարի: Նոյեմբերի կէսից սկսած հեռագրական գործադուլը անգին ծառայութիւն արեց յեղափոխական պրօպագանդայի գործին Դալնի-Վօստօկում, երկու ամիս ընդհատած պահելով կենտրոնի հետ:

ԿՆԵԱԳԻՆԻՆ, 17 յունվարի: Կնեագինինի զեմստվոյին ժողովը որոշեց անճշտապահ վճարող հողատէրերին, նախազգուշացումներից յետոյ, զրկել օժանդակական միջոցներից, կոչ անել ազգաբնակութեանը տուրքեր վճարելու անհրաժեշտութեան մասին: Կրթութեան վերաբերեալ բոլոր ծախքերը կրճատված են, եկեղեցական-ծխական դպրոցներին նպաստներ տալը դադարեցրել են նոյնպէս այլ և ստիպենդիաներ չեն տալիս:

ԿՕՍՏՐՕՄԱ, 17 յունվարի: Իւրիեվսկի գաւառի գործարանական Ռօդնիկ գիւղում հիմնվում է սահմանադրական-ռամկավար կուսակցութեան բաժանմունք: Կրասիլնիկովի գործարանի տիրոջ միջոցներով բացված է մի գեղեցիկ գործարանական դպրոց 500 երեխաների համար:

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՕԴ, 17 յունվարի: Ագրարական շարժումը վերջանում է:

ՄՕՍԿՎԱ, 17 յունվարի: Քաղաքային ձեռնարկութիւնների մէջ ծառայող բանւորները իրաւունք են ստացել մասնակցելու Դումայի ընտրութիւններին: Վաճառականական, ազնուականութեան և պրոֆէսօրների առաջաւոր գործիչներից կազմած խորհուրդ կայացաւ: Վճռված է հիմնել քաղաքական մի «Անկախների ակումբ», հետևեալ պրինցիպներով—սահմանադրական միապետութիւն, ընդհանուր ընտրողական իրաւունք և երկպալատեան սիստեմ: Ակումբը պէտք է հրատարակէ մի շաբաթաթերթ Կիևի համալսարանի պրոֆէսօր Եւգենիյ Տրուբեցկոյի խմբագրութեամբ: Վճռված է կազմել քաղաքական մի կուսակցութիւն, որը միացնէր հոկտեմբերի 17-ի միութեան ձախակողմեան թևը սահմանադրական-ռամկավար կուսակցութեան աջ թևի հետ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունվարի: Վերջացաւ ճեմարանական միութեան երրորդ պատգամաւորական համագումարը: Ճեմարանական նորմալ կանոնադրութեան մշակումը յետաձգված է: Վճռված է առ այժմ ճեմարանական միութիւնը չը համարել միութիւնների միութեան պատկանող կուսակցութիւն: Միանալու հարցը յետաձգված է: Ծխախոտի մասին գումարված խորհուրդը կարծիք յայտնեց, որ բոլոր տեսակի սիգարները պէտք է ազատ լինեն ակցիզի աւելացնելուց:

ՍՈՒԽՈՒՄ, 17 յունվարի: Շրջանի քահանաների համագումարը վերջացաւ. վճռվեց վրաց եկեղեցին աւտոկեֆալիային դարձնելու ցանկալիութեան մասին: Շրջանում խաղաղութիւն է տիրում: Աբխազ ազգաբնակութիւնը իրան զգաստ ու կոռեկտ է պահում:

ԿՕՍՏՐՕՄԱ, 18 յունվ.: Նահանգական Դատարանը քննելով «Կօստրօմսկի Լիստօկի» խմբագիր-հրատարակչուհի Անդրօնիկօվսկայի գործը, մեղաւոր գտաւ ժամանակաւոր օրէնքները խախտելու մէջ և դատապարտեց նրան չորս ամսեայ բանտարկութեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունվ: Պաշտօնական: Մի քանի լրագիրներում հաղորդել էին, որ Նորին Կայսերական Մեծութիւնը ընդունել է ռուսական ժողովրդի միութեան պատգամաւորութեանը: Աչքի առաջ ունենալով այդ խախտումը ցենզուրական օրէնսդրութեան և 1024 յօդ. պատժ. կանոնադր., որը արգելում է առանց առանձին թոյլտւութեան տպագրել յօդուածներ, որտեղ նկարագրվում են անձնական գործողութիւնները և հաղորդում Կայսերական Մեծութեան իր կամ իրան ուղղված բերանացի խօսքերը, յանցաւորները կենթարկվեն դատաստանական պատասխանատուութեան:

ՄԻՆՍԿ, 17 յունվ: Հոկտեմբերի 17-ի միութեան բաժանմունքը դիմեց այն կուսակցութիւնների անդամներին, որոնք մօտ են իրանց ծրագիրներով միութեանը, հրաւիրելով միանալ միահամուռ գործունէութեան համար:

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ, 17 յունվ: Պերմի երկաթուղու գլխաւոր կայարաններում կազմված են յանձնաժողովներ, որոնք երկաթուղու ծառայողներից ընդունում են յայտարարութիւններ Դումայի ընտրութիւններին մասնակցելու համար:

ՏՈՄՍԿ, 17 յունվ: Կայացաւ հոկտեմբերի 17-ի միութեան ժողովը: Շատ ճառեր արտասանվեցին, որովհետև անհրաժեշտ էին համարում եռանդուն միջոցների դիմել ձախակողմեան կուսակցութիւնների դէմ: Միջնակարգ դպրոցներում ուսումը վերսկսվեց:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունվարի: Մօգիլևի փոխ-նահանգապետը հեռագրում է կոմս Վիտտէին. «Գոմելում ջարդը վերջացաւ: Այդ ջարդերի պատճառը ոստիկանական օգնականի սպանութիւնն է և յեղափոխականների դէմ ունեցած ատելութիւնը: Այրվող տների ու խանութների մէջ պայթիւններ էին առաջանում: Ռումբեր էին նետում և հրազէններ արձակում, որին զօրքը պատասխանում էր: Վնասները հասնում են մօտ մի միլիոնի: Կարգը պահպանելու համար միջոցներ են ձեռք առնված: Քննութիւն է կատարվում»: Ժողովրդական մինիստրի նախագահութեամբ կայացած պրոֆէսօրների խորհուրդը համալսարանների բարենորոգութեան առիթով որոշվեց ոչնչացնել էքստրաօրդինարն պրոֆէսօրի կոչումը, որ նրանք Ռուսաստանում ունեն միատեսակ իրաւունքներ, բացի ռոճիկից, օրդինարների հետ: Պրոֆէսօրներ ընտրելու համար կատարվում կօնկուրսով կամ պրոֆէսօրական կոլլեգիայի առաջադրութեամբ, ֆակուլտետի քուէարկութեամբ, ապա խորհրդի: Պահանջվում է մինիստրութեան հաստատութիւնը հիմնաւոր պատճառաբանութիւն:

ԴԻՄԻՏՐՕՎՍԿ, 17 յունվարի: Զեմստվոյին ժողովում աշխոյժ կերպով քննվում էր ֆինանսների մինիստրի առաջարկութիւնը յանձնաժողով կազմելու, որը գիւղացիական բանկի միջոցով մասնաւոր կալուածատէրերի հողերը գիւղացիներին վաճառելու գործը կարգաւորէ: Ձայների մեծամասնութեամբ վճռվեց կազմել հինգ հոգուց բաղկացած մի յանձնաժողով, որոնց թւում երկուսը պէտք է գիւղացի լինի:

ԼՈՄԺԱ 17 յունվարի: Ռուս բնակիչների ժողովը լիովին ընդունեց հոկտեմբերի 17-ի միութեան ծրագիրը:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի հայ օրիորդ կարող է պարապվել փոքր երեխաների հետ ռուսերէն և հայոց լեզուներից, նոյնպէս թուաբանութիւնից հասցէն՝ Елизаветинская улица, д. № 70. (ու. կ.) 1—2

ԴՊՐՈՑ
ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ
Ուսումը վերսկսվում է յունվարի 9-ին
Բեհբութեան փ. տ. №25.

ԲԺ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամեն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեհբուտովսկի և Պասկևիչեայ փող. № 33/15 տ. Մխիթարեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն):
(ա. օ.) 33—100

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գոլովինսկի պրոսպեկտի և Կոջորսկայա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կոջորսկի փողոցից № 2,
(ա. օ.) 74—300

Մի հայ երիտասարդ
խնդրում է պաշտօն ուսուցչի, հաշւապահի գանձապահի և այլ յարմար գործեր. կարող է գնալ և ուրիշ քաղաք կամ գիւղ: Վարել է երկար ժամանակ հաշւապահի պաշտօն և ունի վկայականներ: Դիմել՝ Сергѣевская ул. Правленіе Тифл. Нефтепромышл. Т-ва Бабаянцу: (ա. օր.) 3—3

ԷԼԵԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեղեվանօվի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը,
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կօրգանօվսկայայ փող. № 20 Վերայում: Սեփական տ., տելեֆօն № 791: (ա. օ.) 49—150

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8: (Ե.ո.)34—11

ԲԺԻՇԿ
Տ. Խախանեան
Ներքին, երեխայոց և վեներակ. հիւանդ.
Ընդունում է առաւօտ. 9—11, երեկ. 5—8, կիրակի օրերին միայն առաւօտը:
Վելեամինօվսկայա փողոց, № 22, Նատիկովի տանը:
(Ե. Հ. 2:) 3—15

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. Նաւասարդեան
Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը: 40—100

Յայտարարում եմ իմ յարգելի յաճախորդներին, որ 20-ին նոյեմբերի 1905 թ. միաժամանակ Անդրկովկասեան երկաթուղու Եւլախի ապրանքապահեստի թուրքերը թալանել են և իմ յանձնարարական և առևտրի գրասենեակը, ինչպէս և «Կավկազ» և «Մերկուրի» ընկերութեան գրասենեակը, որի գործակալը Եւլախում ես եմ: Թալանելով տարել են բոլոր ապրանքները և ինվենտարը, մինչև անգամ կանխիկ դրամը, երկաթէ դրամարկղից: Ծառայողները թւով 11 հոգի հազիւ կարողացան ազատվել սպանող մահից, փախչելով Բագու: Համարեա երկու ամիս է չեմ կարողանում ոչ մի կերպ ապահովութիւն գտնել Եւլախ գնալու, որովհետև թէ Եւլախ և թէ Շուշի Եւլախ ճանապարհը գտնվում է երկիւղի մէջ: Հակառակ ցանկութեանս շուտափոյթ վերականգնել գործերի կանոնաւոր ընթացքը անկարելի է դառնում անապահովութեան պատճառով: Վերականգնելուց՝ առանձին կը յայտարարեմ:
Յարգանօք՝ Ներսէս Մելիք-Փաշաեանց
1—2

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1906 Թ.
„ՄՈՒՐՃ"
ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
(Նոր շրջանի VI տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ
Ռուսաստանի եւ Պարսկաստանի—տարեկան 10 ր., կէս տարին 6 ր.,
Արտասահմանի—տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր., (18 ֆ.),
ՀԱՏՈՎ ՀԱՄԱՐԸ ՄԻ ՌՈՒԲԼԻ

Ծանօթութիւն. Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս. սկզբում 5 ր., մայիսի 1-ին 3 ր. և յունիսի 1-ին 2 ր.—կամ սկզբում 5 ր. և յունիսի 1-ին 5 րուբլի: Հայոց դպր. վարժուհիների և ուսուցիչների, գիւղական քահանաների, միջն. ուս. աշակերտների և ուսանողների համար բաժանորդագինն է 8 րուբլի Ռուսաստանում: Թիֆլիսի բաժանորդները կարող են տարեկան բաժանորդագինը (10 ր.) վճարել մաս-մաս, բաժանելով այնպէս, ինչպէս իրանց յարմար է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է
Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փողոց տ. № 12):
Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել Тифлисъ, Въ редакцію журнала „Мурчъ". Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «Murtch».
«Մուրճի» գործակալներն են.
Աստրախան—Գ. ք. Մկրտումեան:
Բագու—բժ. Գ. Սարգսեան, (Б. Морск. д. № 26) և «Сотрудникъ» գրավ.
Բիրի-Էյրաթ—պ. Դ. Տէր-Դանիէլեան:
Երևան—«Արարատ» գրախանութ.
Կարս—պ. Համազասպ Տ.-Խաչատրեան:
Մոսկվա—պ. Ստ. Թումեան.
Սօչ—պ. Արամ Յակոբեան (Սեւծովեզերեայ շրջան):
Սամարկանդ—Ռ. ք. Բէկգիւլեան (Անդրկասպեան երկիր):
Սիմֆերոպօլ—Նիկ. Հայրապետեան:
Թիֆլիս—«Գուտտենբերգ», «Կենտրոն», Զ. Գրիգոր. «գրավ. և «Հերմէս» տպ.
Վլադիկավկազ—Յ. ք. Սարգսեան (Հիւս. Կովկասի համար):
Թաւրիզ—Բժ. պ. Յ. Տէր-Ստեփանեան և Հ. Պանիրեան:
Եգիպտոս—դօկտոր Կ. Փաշայեան-Խան (Ալէքսանդրիա):
Էնզելի—պ. Գ. Մելիք-Աբրահամեան:
Նոր-Ջուղա—պ. Տիգրան Արզաքեան:
Թեհրան—պ.պ. Ալէքսան Թունեանց և Հ. Բաբայեան:

1906 թւականի նոր բաժանորդները կը ստանան 1905 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների «Մուրճ» ձրիաբար: 1—10

1896
ԾԱՂԻԿՆԵՐԻ Օ-ԴԷ-ԿՕԼՕՆ
ԲՐՕԿԱՐ ԵՒ ԿՕՆ.
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Ամեն մրցութիւնից բարձր:
5 12 (ա.օ. 20)

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15.